

# ՎԵՐԱԾՆՈՒԱԾԸ

(Դրամա Յ գործողութեամբ)

Լ Ե Ր Ա Ծ Ն Ո Ւ Ա Ծ Ը

Առաջին ներկայացման համար \*)

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

Աննա, հասակն առած կին	...	օր.	Աւալեան
Տիգրան	նրա որդիքը	...	պ. Ն. Յովհաննիսեան
Սամսոն		...	պ. Մ. Մանուէլեան
Հրանոյշ	նրա աղջկերքը	...	Միրանոյշ
Վարդուշ		...	Մ. Օհաննիսեան
Զաքօ, միջնորդ	...	պ. Կիրակոսեան	
Արամեան, դերասան	...	պ. Յ. Սկումեան	
Ալեքսան, ծառայ	...	պ. Մանուէլեան	

Անցքը ժամանակակից է և տեղի է ունենում Կովկասի մեծ  
քաղաքներից մէկում:

---

\*) 1906 թ. Յունուարի 7-ին, Ալէքսանդրապոլի ժողովրդական տան  
շինութեան մէջ:

## ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻՆ

Մի հիւրասենեակ, որի կահ-կարասին փափուկ է և կահաւորութիւնն առհասարակ շքեղ, մինչև իսկ փարթամ, բայց հնամաշ,—ապացոյց, որ մենք դանուում ենք նախկին հարստի տան մէջ: Աջակողմեան և ձախակողմեան դռները տանուում են դէպի բնակարանի ներսը, իսկ ճակատի դռւար զլիաւոր մուտքն է:

Ժամանակը—առաւատ:

Հրանոյշը նստած է բաղմոցի վրայ և գիրք է կարդում: Քիչ յետոյ մտնում է Արամեանը, որը շտապում է օրիորդին բարևելու:

## ՏԵՍԻԼ 1.

Հրանոյշ, Արամեան.

ԱՐԱՄԵԱՆ. Օրիորդ Հրանոյշ, յարգանքս:

ՀՐԱՄՈՑ. Բարեւ ձեզ, պարհն Արամեան:

ԱՐԱՄԵԱՆ. Ես ձեզ խանգարեցի՞:

ՀԲ. Ո՞չ, նստեցէք խնդրեմ:

ԱԲ. Ի՞նչ էիք կարդում: Երկի, վէպ է:

ՀԲ. Ո՞չ, «Օրէանի կոյս»:

ԱԲ. Ա-, լաւ բան է: Բայց միթէ դեռ նոր էք կարդում:

ՀԲ. Ո՞չ, բայց ես շատ եմ հաւանում այս գիրքը: Կարդում եմ, չեմ կշտանում: Մի քանի տեղեր մինչև անդամ անդիր եմ արել:

ԱԲ. Զի՞նի՞, օրիորդ դուք մտադիր էք կատարել այդ դերը:

ՀԲ. Ներեցէք, իս այդպիսի յանդանութիւն չունիմ:

ԱԲ. (Եփծաղում է) Իհարկէ, իհարկէ, ես կատակ եմ անում:

Հա, այժմ մեր գործից խօսենք: Հիմա դուք կը մտածէք. սրա կամ աղն է պակաս, կամ մաղը, որ էլի...

ՀԲ. Երկի դարձեալ ներկայացում:

ԱԲ. Այն, օրիորդ Հրանոյշ, դարձեալ ներկայացում: Եւ ես եկել եմ ձեզ մօտ յատկապէս նրա համար, որ խնդրեմ ձեր բարեհաճ մասնակցութիւնը:

ՀԲ. Ի՞նչ պիէս էք ընտրել:

ԱԲ. Մի նոր պիես է, և դուք մի շատ լաւ դեր ունիք: Ես վստահ եմ, որ դուք կ'արդարացնէք մեր յոյսը: Շատ ազ-

գուռ և շնորհապարտ դեր է և ձեզ միջոց կը տայ այս անգամ ձեր բոլոր բեմական ձերքը փայլեցնել բեմի վրայ:

ՀՌ. Իսկ եթէ իս ոյժից վեր լինի այդ դերը...

Ա. Ամենախն ոչ: Ձեած չափած է ձեզ համար: Կարծես հեղինակը ձեզ է ունեցնել աչքի առաջ այդ գերը գրելիս:

ՀՌ. Եթէ պատասխանատու դեր է, ես վախենում եմ փը-չացնեմ:

Ա. Համեստութիւնը մի կողմ, օրինրդ: Ես կարող եմ ե-րաշխաւորել, որ դուք շատ լաւ կը տանէք այդ դերը:

ՀՌ. Բայց ես գեռ այնքան անփորձ եմ: Հազիւ մի քանի անգամ բեմ ելնել, իբրև սիրողուհի, և յանկարծ ստանձնել մի այդքան պատասխանատու դեր. այն էլ նոր պիեսի մէջ, դա, ինձ թւում է, մինչև անգամ յանդբնութիւն իմ կողմից:

Ա. Օրինրդ, իրաւ է, կան այնպիսի անշնորհներ, որոնց բեմ դուրս գալը առնասարակ յանդբնութիւն է. բայց ում ար-րուած է ընդունակութիւն, արդէն յանցանք է թագցնել իր քանրարը, նման ժլատին, որ իր գանձը թաղում է հողի տակ: Երբ դուք առաջին անգամ բեմ դուրս հկաք և այն ոչ փայլուն դերի մէջ, դուք միանգամից գրաւեցիք հասարակութեան հա-մակրութիւնը: Ձեր մտածուած խաղը, ձեր մաքուր ձայնը, ձեր չափաւոր շարժուածքները—այնքան դուր եկան հանդիսական-ներին, որ ձեզ հինգ-վեց անգամ ովկորուած դուրս կանչեցին: Դա մի պատիւ է, որին արժանացնում են միայն ճանաչուած և տաղանդաւոր արտիստներին: Պարզ է, ուրեմն, որ դուք ու-նիք անուրանալի ձիրք կամ գուցէ և տաղանդ:

ՀՌ. (Շոյուած եւ ուրախ): Օ՛, մինչև անգամ տաղանդ...

Ա. Այն, այո՛, մինչև անգամ տաղանդ... Տաղանդը, կար-ծում էք, պողաւո՞ր է լինում: Այո՛, դուք ունիք տաղանդի բոլոր նշանները, որ միայն փորձառութեան է կարօտ, որպէսզի դար-գանայ: Եւ սա միայն իմ կարծիքը չէ: Միթէ լրագիրները հա-մարեա նոյն կարծիքը չյայտնեցին ձեր մասին:

ՀՌ. Գիտէք, պարոն Արամեան, ես, իհարկէ, ուրախու-թեամբ կը վերցնէի ձեր առաջարկած դերը... Դա ինձ համար էլ մեծ բաւականութիւն է... Ես ձեզ, կարծեմ, առաջ էլ ասել եմ, որ ես թատրոնի սիրահար եմ. որ թատրոնից աւելի բար-ձը զուարճութիւն չկայ ինձ համար, բայց...

Ա. Բայց ի՞նչ:

ՀՌ. Մեծ հարց է—ի՞նչպէս կը վերաբերուեն իմ տանեցիք:

Ա. Միթէ նրանք կարող են հակառակուել:

ՀՌ. Ես կարծում եմ: Անցեալ անգամ ի՞նչ դժուարու-թեամբ կարողացայ համոզել մօրս, իսկ մեծ եղբայրս ուղղակի

դէմ էր. ես դուրս եկայ բեմ նրա կամքի հակառակ, և դրանից յետոյ նա մի ամբողջ շաբաթ էլ ինձ հետ չէր խօսում:

Ա. Զարմանալի է, ճշմարիտ: Որ ձեր մայրը ձեզ այդ արգելում է, այդ դեռ հասկանալի է. ինքը պառաւ կին, կին հասկացողութիւնների տէր, նախապաշտուած, ասէկոսէններից վախեցող... Իսկ ձեր եղբայրները... Նրանք հօ երիտասարդ մարդիկ են, իրանք էլ երբեմն յաճախում են թատրոն. քիչ թէ շատ, երկի, հասկանում են թատրոնի նշանակութիւնը, նրանք ինչու պէտք է դէմ լինեն, ասացէք խնդրեմ, ես այդ չեմ հասկանում...

Հ. Գիտէք, դերասանի և դերասանուհու անունը առհասարակ կոտրուած է մեղանում...

Ա. Այո, ճշմարիտ է, բայց...

Հ. Դրանք չեն կարող հաշտուել այն մտքի հետ, որ կարելի է լինել դերասան, կամ դերասանուի և մնալ միևնոյն ժամանակ ազնիւ և պատուաւոր:

Ա. Ինչպէս էլ լինի, օրինրդ, դուք պէտք է վերցնէք այս դերը: Շատ և շատ խնդրում եմ Դուք կարող էք ձերոնց հեշտութեամբ համոզիլ Դժուարը առաջին անգամն էր...

Հ. Կուզէք, ես կանչեմ մօրս, և դուք նրան համոզեցէք:

Ա. Ուրախութեամբ: Խնդրեմ:

Հ. Ես—իսկոյն: (Գնում է.)

## ՏԵՍԻԼ 2.

Արամիան (մանակ):

Զարմանալի է մեր բանը: Ինքը հասունացած աղջիկ, ընդունակ, թատրոնի սիրահար, կարող էր այնքան օգտաւէտ լինել մայրենի բեմին, և պէտք է հպատակուի մի տգէտ պառաւի և մի տխմար եղբօր քմահաճոյքին... Որքան անմեղ ցանկութիւն և ինչպիսի խոչնդուտներ... Այսքան էլ ճնշել ուարդու անհատականութիւնը... Զարմանալի՞ է:

(Մտնում են Աննա և Հրանոյշ)

## ՏԵՍԻԼ 3.

Աննա, Հրանոյշ, Արամիան.

Ա. Բարե ձեզ, տիկին:

Ան. Բարով էք եկել: Համեցէք:

## ՎԵՐՍԾՆՈՒԱԾԸ

ԱՐ. Տիկին, ես մի բան եմ խնդրելու, բայց չմերժէք,  
Շուտով մենք մի ներկայացում պիտի տանք: Մի լաւ գերկայ,  
որ կամենում ենք առաջարկել օրիորդ Հրանոյշին:

ԱՆ. Որդի, ի՞նչ էք տեսել Հրանոյշից... Նա հօ դերասա-  
նուհի չէ:

ԱՐ. Սիրողների ներկայացում է, տիկին: Դրա համար էլ  
մենք դիմում ենք օրիորդին, իբրև լաւ սիրողուհու:

ԱՆ. Է՞ս, չէ, յարմարութիւն չկայ...

ԱՐ. Ի՞նչ էք ասում, տիկին: Ինչ անյարձար բան կայ  
այստեղ: Օրիորդն ունի լաւ բեմական ձիրք, հիանալի խաղում  
է, ամենքն հաւանում են... Եւ դուք նրան արգելում էք:

ԱՆ. Այր ի՞նչ կարող է սովորել աղջիկս էդ ձեր թատ-  
րոնումը: Ես մնաց թոյլ տամ աղջկաս էնքան բազմութեան ա-  
ռաջ դուրս գայ բեմ, ծովուի, սրա նրա հետ սիլի-բիլի անի...  
Մի անգամ որդիքս ինձ թատրոն տարան: Մի բան տեսայ—ա-  
մօթից միսս թափուեց: Մի աղջիկ դուրս եկաւ, առանց ամա-  
չելու եկաւ, տղամարդու վզովը փաթաթուեց ու...

ԱՐ. Տիկին, այդ ձևացնում են միայն, իսկապէս հօ չեն  
սիրում իրար: Կարող է պատահել, որ բեմի վրայ միսիանց  
այգպէս փայփայող դերասանն ու դերասանուհին, բեմի ետև  
իրար հետ չեն խօսում անգամ, իրար ատելով ատում են...

ԱՆ. Միևնոյն է:

ԱՐ. Տիկին, ձեր երկիւղը միանգամայն անտեղի է: Մենք  
հօ չենք առաջարկում օրիորդին դերասանական խումբը մանել,  
դերասանների հետ մշտական ներկայացումներ տալ: Սա մի  
սովորական ներկայացում է, որին մասնակցում են շատ պա-  
տուական տներից կանայք և օրիորդներ: Այս նախ և առաջ:  
Յետոյ, բացի այդ, դերի մէջ էլ ոչ մի սիրային արկած չկայ.  
Եթէ փաթաթուում և համրուրում է,— միայն իր ընկերուհու  
հետ: Ուրեմն...

ԱՆ. Գիտէք, ինչ կայ: Եթէ ես թողնեմ էլ, միենոյն է,  
ախպէրը չեն համաձայնի: Նրանք չեն սիրում այդ տեսակ  
բաներ:

ԱՐ. Այդ դէպքում ես կ'ուզէի խօսել նրանց հետ:

ԱՆ. Հիմի ոչ Տիգրանն է տանը, ոչ Սամսոնը:

ԱՐ. Այդ ոչինչ: Ես կը գամ երեկոյեան կամ, եթէ չկա-  
բողացայ, վաղը: Կարելի է:

ԱՆ. Ինչու չէ:

ԱՐ. (Վեր կենալով) Ուրեմն ց'տեսութիւն:

ԱՆ. Գնաք բարով:

ԱՐ. (Օր. Հրանոյշին) Օրինարդ, դուք էլ հողը պատրաստեցէք:

ՀՌ. Դժբախտաբար, ինձանից ոչինչ չէ կախուած:

ԱԲ. Ես յոյս չեմ կորցնում: Յ'տեսութիւն (Գնում է):

ՀՌ. (Խէթ նայելով մօրը) Դուք միշտ այդպէս էք: (Գնում է):

ԱՆ. Եղագէս որ աշքերդ չուեցիր վրաս, ևս էլ քեզանից վախեցայ, չէ: Իմ դարդը—բո դարդը: (Մտնում է Տիգրանը):

### ՏԵՍԻԼ 4.

Աննա, Տիգրան.

ՏԻԳ. Մայրիկ, Զաքօն չեմ եկել:

ԱՆ. Ոչ, չի եկել: Տիգրան, մեմ տեսար դրանը:

ՏԻԳ. Ոչ ոքի: Ո՞վ էր այստեղ:

ԱՆ. Արամեանը:

ՏԻԳ. Դերասամնը: Ինչի՞ համար էր եկել:

ԱՆ. Ել ինչի՞ համար կը դար:

ՏԻԳ. Զլինի էլի դեր էին բերել:

ԱՆ. Բաս ինչ, Ներկայացում ունին, ուզում են Հրանոյշին դեր տան...

ՏԻԳ. Ա՛հ, ես դրանց... Մայրիկ, տես, մի բան է ասում եմ, դրանք վերջի վերջոյ Հրանոյշին խելքից հանելու են: Վա, սա ինչ բան է, ցած կտորը են գտել... Կարծես էլ ուրիշ աղջկերք չկան, հէնց մենակ Հրանոյշն է... Զանձրացրին, վերջապէս...

ԱՆ. Ես տեղեակ չէի: Հրանոյշը եկաւ թէ, մայրիկ, քեզ մարդ է կանչում: Ես էլ միամիտ եկայ էստեղ, տեսնեմ—մեր անբեղ անմօրուք պարոն դերասանը աւաջիս կանգնեց:

ՏԻԳ. Յետայ... Դու իհարկէ, մերժեցիր նրան:

ԱՆ. Ես չէի համաձայնում: Բայց էնքան ինդրեց, էնքան աղաչեց, որ դրուստն ասած, երեսս չկարեց, որ չէ ասէի: Ես պատասխան տուի, որ Տիգրանը գիտէ, նրա բանն է, կը գայ—կ'ասեմ. կ'ընդունի, լաւ, չի ընդունի, ինքը գիտէ:

ՏԻԳ. Է՛հ, ես զարմանում եմ քեզ վրայ: Ել Տիգրանն ինչացնու էր: Հարկաւոր էր կարուկի մերժել, որ էլ չհամարձակուի մեզ ձանձրացնել... Ել ինչ դարդ... Մեր հոգսը հէնց դրանց ներկայացումն է... Չեմ իմանում, ինչպէս անենք, որ շուտ տեղ անենք խեղճ աղջկան... հասակն անց է կենում, գնայ իր համար տուն ու տեղ սարքի... Մենք էլ մի քիչ թեթևանանք մը-տածմունքից... Սրանք եկել են դեռ նոր նոր բաներ են սարքում... Ի՞նչ գիտես, որ հէնց դրա համար չէ, որ էսքան ժամանակ ուզող չեղաւ ու տանը մնաց... Հազիւ մեզ մի քիչ մո-

ռացել էին: Հիմա եկ ու նորից բամբասանքի տակ գցիր, խեղճ աղջկան...

Ան. Ել ասում ես, որդիս: Դրա դարձը ջանս առել է: Ախր մինչև երբ պիտի մնայ տանը: Ախ, մի տեղ անենք նրան, հէնց կ'իմանամ—սրտիս ծանր քարը վեր ընկաւ:

Տիգ. Չեմ հասկանում, թէ Զաքօն ինչու ուշացաւ, մի լուր չքերաւ... Տեսնենք, հաւանել է. Հրանոյշին, չի հաւանել:

Ան. Ի՞նչ կ'ասի, որ չի հաւանի: Ի՞նչ պակաս աղջիկ է Հրանոյշը: Հա, մատս խուփ, մի քիչ համարձակ է: Բայց հիմկուայ ժամանակում որ աղջիկը չի համարձակ:

Տիգ. (Որ առանց մօրը լսելու մտախոհ անց ու գարծ է անում): Մայրիկ համբերութիւնս չի տալիս սպասեմ: Ես գնում եմ Զաքօի մօտ:

Ան. Ի՞նչ կայ, որ... Գնա մի բան իմացիր, որ մենք էլ միամտուենք:

Տիգ. Այն, գնամ, գնամ: (Կամնում է զնալ):

Ան. (Մի բան յիշելով) Հա, կաց, Տիգրան: Բան եմ ասում: Չեռքիդ փառ կայ:

Տիգ. Շատ է հարկաւոր: Ի՞նչի համար ես ուզում:

Ան. Աղջկերքը նոր շորեր պիտի կարել տան:

Տիգ. Նոր շորեր... Վա, մի ամիս էլ չկայ, որ երկուսին էլ ոտից մինչև գլուխ նորոգեցինք: Հիմա դարձեալ նոր շորեր... Ուզում են դիւժինը լրացնեն, թէ մօղմն է փոխուել...

Ան. Որդիս, վերջին կարածը հասարակ բան էր:

Տիգ. Հիմա շքեղն են կամենում, ուզում շին անել, համ... Լաւ, էլ ի՞նչ դարդ: Դրանք շիկ անեն, մեր ջանը դուրս գայ:

Ան. Ի՞նչ արած, օտարներ չեն, ձեր քոյրերն են: Նրանք վատ հագնուեն, ամօթը մենակ նրանցը չէ, իմն էլ է ու ձերն էլ է:

Տիգ. Մայրիկ, ես ոչինչ չունիմ դրա դէմ: Թող լաւ հագնուեն, թող մախմուր ու ապրեշումի մէջ ֆրֆուան... Բայց դրան էլ հասցնող է պէտք թէ ոչ: Փառը Աստծու. մեր հայրը հազարներ չի թողել բանկումը: Ձեզ էլ յայտնի է, որ այս տանը ընդամենը երկու աշխատող ձեռք կայ միայն—ես եմ ու Սամսոնը:

Ան. Ել ճարներս ինչ, որդիս: Ընկել էք—պիտի տանէք: Էսօր էգուց է դրանցը: Աստծով, երկուսին էլ տեղ կ'անենք, դրանց հոգախցը կ'աղատուենք ու նրանից յետ՝ Աստուած ուղործած է:

Տիգ. Ուղիղ ես ասում, մայրիկ: Հէնց այդ յոյմն է, որ ինձ պահում է: Թէ չէ—այստեղ է հասել է, մայրիկ:

Ան. Թէ փողի մասին է խօսքդ, որդիս, մի տաւ Քեզ չեմ զոռում... Քո բարի կամքն է:

Տիգ. Է՞հ, քո բարի կամքը... Կարծես, իմ խօսքը հիմիկուալ մասին է: Ա՛ո ինչքան գրպանումս կայ: Տուել եմ ու կը տամ էլ ու ջանս էլ դուրս կը գայ: Իմ դարդը իմ ապագայի մասին է:

Ան. Դարդ մի անի, որդիս: Ապագադ լաւ կը լինի:

Տիգ. Մօս հիմա քսան մանէթ կայ: Իհարկէ, դա բաւականութիւն չի անելու, յետոյ էլի կը տամ: Ես գիտեմ, որ մի այդքան էլ և դեռ աւելի գնալու է կարել տալուն, զանազան հաշիաների, արդ ու զարդի... Դրանց շորը ինձ նստելու է պակասը մի ութսուն բուրլի փող: Աստուած վերջը բարի անի:

(Գնում է: Մտնում է Վարդուշը):

### ՏԵՍԻԼ 5.

Աննա, Վարդուշ.

ՎԱՐԴԻ. Մայրիկ, տուեց փողը:

Ան. Տուեց, տուեց:

ՎԱՐԴԻ. Ի՞նչքան է:

Ան. Քսան մանէթ:

ՎԱՐԴԻ. Քսան մանէթ... Փիշ. գնա ու քսան մանէթով բան առ:

Ան. Բաս ի՞նչքան էիր ուզում: Արշինը տասը մանէթանոց կտոր պիտի առնէք:

ՎԱՐԴԻ. Օ՞հ, ի՞նչ ժլատն է մեր Տիգրանը... դողում է փողի վրայ, դողում է... Սամսոնը էլի լաւ է...

Ան. Աղջի՛, ախաբերքդ խաղնի՛ վրայ են նստած, որ էղակէս մեծ մեծ խօսում ես: Դու մի հաշմել ես, թէ տարեկան ինչքան փող է գնում հէնց մենակ ձեր երկուսիդ շորերի վրայ:

ՎԱՐԴԻ. ՄԵծ բան է մի քանի հարեւը մանէթը:

Ան. Էդ փողը ախաբէրքդ էսպէս են դատում, Է: (Ցոյց է տալիս, որ քրտինք է սրբում): Քեզ համար էդ ոչինչ:

ՎԱՐԴԻ. Էլ ի՞նչ եղբայրներ են, եթէ իրանց քոյրերի համար պիտի խնայեն...

Ան. Վայ քու խելքին, Վարդնւշ... Սկի բան չես հասկանում... Ոնց որ մի միամիտ երեխայ:

ՎԱՐԴԻ. Շատ լաւ էլ հասկանում եմ:

Ան. Դու կարծում ես, ախաբերքդ պարտակմն են, համ, որ մինչև վերջը ձեր հոգաը քաշեն:

ՎԱՐԴ. Իհարկէ, պարտական են:

ԱՆ. Դու որ յիմար չլինես, էդ խօսքը կ'ասե՞ս:

ՎԱՐԴ. Մայրիկ, ի սէր Աստուծոյ, բաւական է: Զեմ իմաստում ինչ է պատահել քեզ: Մի քանի մասէթ փող էք տալիս, մեր քթածակերիցը քիչ է մնում հանէք: Զէք կամենում, մի տուէք, Խնդրող չկայ:

ԱՆ. ԱՌ. առ: Խելքիդ աղ անեմ:

ՎԱՐԴ. Սա հերիք չէ: Շատ կը պակսի:

ԱՆ. Էլի է տալու, աղջի: Դեռ գնացէք առաջ կտորներն առէք... ԱՌ, ես Հրանոյշին էլ կ'ասեմ, միասին գնացէք: (Մօտենալով դրանք): Հրանոյշ, էստեղ արի:

(Մօտենում է Հրանոյշը:)

### ՏԵՍԻԼ 6.

Աննա, Հրանոյշ Վարդանուշ:

ԱՆ. Տիգրանը փող տուեց, որ ձեզ համար շորել կարել տաք: Պատրաստուեցէք, որ գնաք:

ՀԲ. Ես չեմ գնալու: Թող Վարդուշը մենակ գնայ:

ԱՆ. Ինչու:

ՀԲ. Այնպէս: Զեմ կամենում:

ՎԱՐԴ. (Խաղողելով) Զեմ կամենում:

ՀԲ. (Խէթ նայում է քրոջը):

ԱՆ. Դէմ արի ու հաւատա: Աղջկայ ձեռը փող տաս, որ գնա իր համար լաւ շորեր առնի. նա կանգնի, թէ ոչեմ կամենում:

ՎԱՐԴ. Ինձանից էլ շատ է ուզում:

ՀԲ. Ուրիշներին քո արշինով մի չափիր:

ՎԱՐԴ. Թեղ հետ խօսող չկայ:

ԱՆ. Շատ հարկաւոր է, թէ չես առնի: Կարծում է աղաշանք պիտի անենք:

ՀԲ. Ես այդպիսի բան չեմ կարծում: (Կամենում է հեռանալ:)

ԱՆ. (Պահում է նրան) Աղջի, ինչու ես էդպէս ծռուել: Ի՞նչ է պատահել, որ երէկուանից դէսը սկսրտուել ես էնքան, որ հետդ խօսել չի լինում:

ՀԲ. Ինձանից էլ լաւ գիտես, թէ ինչ է պատահել:

ԱՆ. Մի լաւ տեղից քեզ ուզող կար, ես էլ տարայ քեզ ցոյց տուի: Սա Բնչ մի վատ բան է, որ գլխիս կրակ ես թափում:

ՀԲ. Երևի, վատ բան է, որ ինձ զայրացնում է:

Ան. Լաւ, ի՞նչդ պակսեց: Զառդ վեր եկաւ:

Հր. Զառս վեր չեկաւ, բայց ես գետինը մտայ ամօթից այնքան հիւրերի առաջ:

Ան. Ի՞նչ ամաչելու բան կար, որ...

Հր. Դուք ինձ հաւատացնում էք, թէ բարեկամի մօտ հիւր ենք գնում, այն ինչ խարելով տանում էք ինձ և, ինչպէս ապրանք, ինչպէս մի ծախու ձի, ցոյց էք տալիս, այն էլ ում—մի տգէտ և ապուշ մարդու:

Ան. ԶԵ՞ՆԴ: Ապուշը հէնց դու ես, որ էն պատուական մարդուն չես հաւանում:

Հր. Պատուական մարդ... Հա-հա-հա... էլ պակասութիւն չունի... Ո'սկի է, սովոր...

Ան. Բաս ի՞նչ: Թեզ լայեղ չէ:

ՎԱՐԴ. Ես զարմանում եմ... Ի՞նչ պակաս մարդ է որ...

Հր. Այս: Այքան հաւանում ես... Ուրեմն ինքդ առ: Ես բեզ նրան ուրախութեամբ զի՞անում եմ:

ՎԱՐԴ. Նա քեզ է ուզում, ոչ թէ ինձ:

Ան. Աւելի լաւ կ'անես, փառք տաս Աստծուն, որ վեր-շապէս բախտդ բաց արեց, ոչ թէ...

Հր. Ի՞մ բախտը... (Միծաղեղով նեռանում է:)

ՎԱՐԴ. Մայրիկ, Զաքօն, Զաքօն եկաւ: (Գնում է: Մտնուս է Զաքօն:)

## ՏԵՍԻԼ 7.

Աննա, Զաքօ.

**ԶԱՔՕ.** Բարձվ, քեռակին:

Ան. Բարով եկար, Զաքօ, Տիգրանին չտեսամբ:

**ԶԱՔՕ.** Զեմ տեսել:

Ան. Նա քեզ մօտ գնաց:

**ԶԱՔՕ.** Ես փեսացուի մօտիցն եմ գալիս:

Ան. Փեսացուի... Հը՛, ի՞նչ բարի համբաւ:

**ԶԱՔՕ.** Բարի համբաւ որ չլինի, Զաքօն ի՞նչ է շինում էստեղ:

Ան. Նստիր, Զաքօ, համեցէք, բեղարած կը լինես:

**ԶԱՔՕ.** (Նստում է) Ես ծերութիւնն էլ սի բան չի եղել, քեռակին: Մարդ շատ շուտ դադրում է:

Ան. Ես էլ հէնց քո օրին եմ, Զաքօ:

**ԶԱՔՕ.** Է՛հ, յետոյ, քեռակին, մի ասա տեսնեմ, ի՞նչ էք խօստանում ինձ, եթէ էս բանը դրստեմ:

ԱՆ. Թող մի գլուխ գայ բանը, Զաքօ, ազիզորդոցս արել  
զիտենայ, քեզ էնպէս լիացնենք, որ...

ԶԱՔՕ. Ինչ մնում է բանը գլուխ գալուն, քեռակին, բա-  
նը գլուխ եկած վերջացած համարիր:

ԱՆ. Աղջկան հաւանել է:

ԶԱՔՕ. Հաւանել է, թէ խօսք է: Նրա խելքը, նրա վա-  
րուեցողութիւնը, նրա ճարտար խօսելը, ճշմարիտ եմ ասում,  
քեռակին, փեսացուին հիացրել են: Գիտես ինչ էր ասում,  
«Իմ բոլոր կարողութիւնն, ասում էր, էդ աղջկան հալալ է»:

ԱՆ. Հէնց Էդպէս էլ ասաց:

ԶԱՔՕ. Խսկ և խսկ նրա խօսքերն եմ կրկնում:

ԱՆ. Փառք Սաեղծողին. Աստուած քեզ բարի տայ, Զաքօ,  
որդոցդ առաջը բերի:

ԶԱՔՕ. Զէ, աղջկադ բախտը լաւ բանեց:

ԱՆ. Շնորհակալ եմ: Էս քո հունարն է, Զաքօ:

ԶԱՔՕ. Ինձ Զաքօ կ'ասեն, իմ ձեռքով կարգուածը բախ-  
տաւոր կը լինի: Սաղ քաղաքն էլ գիտէ, որ Զաքօի ոտը թեթև է:

ԱՆ. Ես միայն մի բանից եմ վախենում:

ԶԱՔՕ. Ի՞նչ բանից:

ԱՆ. Զաքօ, յանկարծ չվերկենայ փեսացուն ու փողի ա-  
նուն տայ:

ԶԱՔՕ. Մաքովդ էլ չանց կացնես:

ԱՆ. Ասենք, աղջկայ վրայ լաւ բաժինք կը տանք...

ԶԱՔՕ. Էդ էլ ձեր գիտնալու բանն է: Բաժինք կը տաք,  
ձեր աղջկան կը տաք, չէք տայ, փեսացուն այնումն էլ չի գցէ:  
Էդ կողմից միամիտ կացէք, նա ձեզանից ուրիշ ակնկալութիւն  
չունի: Լաւն էն է վճռենք, թէ Երբ, որ օրը փեսացուն գայ  
նշանը բերի:

ԱՆ. Որդիքս էլ տանը չեն, առաջ մի խորհուրդ անենք,  
յետոյ:

ԶԱՔՕ. Վնաս չունի, խորհուրդ արէք: Միայն մի բան եմ  
խնդրում, քեռակին, ինչ որ վճռելու լինէք, ինձ շուտ իմաց ա-  
րէք, որ ես էլ փեսացուին յայտնեմ:

ԱՆ. Չենք ուշացնի, Զաքօ: Էսօր և եթ:

ԶԱՔՕ. Շատ բարի: Հիմա ես գնամ: Մառայութիւն:

ԱՆ. Գնամ բարով: Խէրով լինի ոտդ:

(Զաքօն գնում է: Մտնում է Վարդուշը դրսի զգեստով:)

## ՏԵՍԻԼ. 8.

Աննա, Վարդուշ:

ՎԱՐԴԻ. Մայրիկ, ես գնացի:

ԱՆ. Բաս Հրանոյշը:

ՎԱՐԴԻ. Նա չի գալիս:

ԱՆ. Գլխի վրայ կը գայ: Զի գալիս Հրանոյշ:

Հրանոյշի ճայնը. (միւս սեննակից): Հրանոյշին հանդիսա  
թողէք:ՎԱՐԴԻ. Տեսմք: Դու նրան նոր ես ճանաչում: Նա իր թը-  
քածը չի լիզի: Ասաց չչեմ գալու—վերջացաւ:ԱՆ. Զի գալիս, թող չզայ: Դու էլ գնա քեզ համար մի  
էն տեսակ հիանալի կոտր առ, որ տեսնի—աչքը դուս գայ:

ՎԱՐԴԻ. Իհարկէ, հէնց այդպէս էլ պիտի անեմ:

(Գնում է, Մտնում է Տիգրանը):

## ՏԵՍԻԼ. 9.

Տիգրան, Աննա:

ԱՆ. Զուր տեղը գնացիր, Տիգրան: Զաքօն քիչ առաջ էս-  
տեղ էր:

ՏԻԳ. Հը, ի՞նչ էր ասում:

ԱՆ. Փեսացուն, ասում է, շատ հաւանել է Հրանոյշին,  
ինելը գնացել է:

ՏԻԳ. Նշանը ե՞րբ է տալիս:

ԱՆ. էդ մենք պիտի վճռենք,

ՏԻԳ. Ես կարծում եմ, հէնց այսօր կամ վաղն և եթ կա-  
րելի էր: Քանի շուտ, այնքան լաւ:ԱՆ. Բաս փեսացուի մասին հաստատ տեղեկութիւններ  
չհաւաքե՞նք, յետոյ:

ՏԻԳ. Ի՞նչ տեղեկութիւններ ես ուզում:

ԱՆ. Ով գիտէ, է, հազար ու մի բաներ են ասում:

ՏԻԳ. Օրինակ:

ԱՆ. Լսեցի, որ իբր թէ պարտքեր շատ ունի:

ՏԻԳ. Բայց որ պարտքերի դիմաց հարիւր հազարի կայ-  
քեր ունի, այդ չե՞ս լսել:ԱՆ. Ցետոյ, իբր թէ մի ժամանակ կոտր է ընկել ու  
բանտումը նստել...

Տիգ. Բան ասաց... Հիմա բանտումը չէ. Փառք Աստծուն. Մէկ էլ թէ մաքուր ճանապարհով չի հարստացել ու շատ խեղճերի է զրկել...

Տիգ. Դէ հերիք է դա, մայրիկ, Այնպէս խամ խամ խօսում է, կարծեն աշխարհից բեխաբար լինի: Իբր թէ քո որդիքը շատ մաքուր ճանապարհով են մի երկու շահի ձեռքները զցել: Բայ ինչ է: Մեռնեմ ես դրանց մաքուր ջանին... Զորս կողմդ խարէութիւն է, մայրիկ. Ի՞նչ ես ասում:

Ան. Ինչպէս կ'ուզես, որդիս: Ուզում ես, հէնց վաղն և եթ ասենք նշանը բերի:

Տիգ. Իհարկէ, էլ ի՞նչի համար ենք յետաձգում:

Ան. Բոլորը եօլա կը գնայ, Հրանոյշն է մի քիչ չեմ ու չում անում:

Տիգ. Զեմ ու չում անում: Ապա թող մի համարձակուի... Հազիւ է բախտը բերել...

Ան. Կանչեմ գայ:

Տիգ. Թող գայ, տեսնենք: (Աննան գնում է:)

### ՏԵՍԻԼ 10.

Տիգրան (Մենակ).

Զէ, պէտք է վերջացնել, Նրա խելքով եմ ընկնելու, ի՞նչ է: Նա ի՞նչ իրաւունք, ինչ ձայն ունի այս տանը: Զեմ-չում է անում: Ապա թող համարձակուի մի ինձ մօտ էլ չեմ-չում անել...

(Մտնում է Աննան, նրա ետեւից Հրանոյշը լուրջ եւ դժգոհ:)

### ՏԵՍԻԼ 11.

Տիգրան, Աննա, Հրանոյշ.

Ան. Արի էստեղ, մեզ մօտ նստիր-

ՀՌ. (Կարծես ակամայ եւ դանդաղ առաջ է զսլիս եւ նստում նը- րանցից քիչ հեռու:

Ան. Գիտես ի՞նչ կայ, Հրանոյշ: Երեկուայ տեսածդ մար- դը, բանից երկում է, քեզ շատ հաւանել է. էսօր էլ մարդ է զրկել մեզ մօտ ու քեզ ուզում է:

ՀՌ. Ուզում է, դուք էլ տուէք:

Ան. Հենց էդպէս էլ վճռել ենք:

ՀՌ. Այս, արդէն: Ի՞նչ շուտ:

Ան. Տես, Հրանոյշ, էլ չեմ-չում չմնես, հա, թէ չէ, Աս-

ստուած է վկայ, էստեղ է հասել, բանդ վատ կը լինի: Մեր փեսացուն...

ՀԲ. (Քրքիւլի) Մեր փեսացո՞ւն.. (Դարձեալ քրքիջ):

ՏԻԳ. Հրանիշշ, զգնյշ կաց, որ այդ ծիծաղը լացի չփոխուի: Մենք այստեղ լուրջ գործի մասին ենք խօսում, որ բանը ծաղրի՞ն ես գցում: Մեր մտածմունքը, մեր հոգսը քո բախտաւորութիւնն է, իսկ դու կարծում ես հետդ կատակ ենք անում:

ՀԲ. Ես ձեզ վրայ զարմանում եմ.

ՏԻԳ. Ի՞նչ զարմանալու բան կայ այստեղ:

ՀԲ. Զգիտեմ, ինձ ինչի տեղ էք զնում:

ԱՆ. Ասիր ի՞նչ պակասութիւն ունի էս մարդը, որ էդպէս բարձրից ես խօսում: Մի քիչ տարիքով է, Էդ չէ մենակ: Էլ ուրիշ թնչ պակասութիւն ունի, թէ զիտես, ասա: Շէնք ու շնորհք ասես, ունի, ինքը բոյ ու բուսաթով, կարգին տղամարդ...

ՏԻԳ. Մայրիկ, թնչ ես դատարկ բաների ետևից ընկեր: Գլխաւորն այն է, որ փող կայ ձեռքին, փող, հարստութիւն...

ԱՆ. Ես էլ հէսց դրան էի գալիս: Ի հարկէ, ամենից գըլխաւորը փողն է: Փողը որ կայ, ամեն բան կայ:

ՀԲ. Դուք իզուր էք միասին աշխատում ինձ համոզել:

ՏԻԳ. Ի՞նչ է ասում...

ՀԲ. Միթէ չէք տիսնում, որ իմ և նրա մէջ ոչ մի ընդհանուր բան չկայ և չէ կարող լինել: Ե՞ս ով և նա ով: Մենք օտար ենք միմեանց:

ԱՆ. Լսմամ ես, Տիգրան:

ՏԻԳ. Հ'ըմ... Յետնի:

ՀԲ. Մի կողմ թողնենք նրա արտաքինը... որ վերին աստիճանի հակակրելի է, եթէ չասեմ աւելին: Բայց գոնէ մարդու պէս կարողանայ երկու խօսք կապել իրար հետ—ահա այդքան զուրկ է նա մարդկային արժանաւորութիւնից: Երբ նա սկսում էր խօսել ես հազիւ էի կարողանում պահել ծիծաղութ:

ՏԻԳ. Յետնի... էլ թնչ ունիս ասելու:

ՀԲ. Շատ բան: Բայց թնչ հարկաւոր է ասել: Բաւական է և այս, որ ես (շեշոնկով) այդ մարդուն ոչ միայն չեմ սիրում, երեսը տեսնել չեմ կարող:

ՏԻԳ. Հա-մ:

ՀԲ. Այս, ես նրան արհամարհում եմ:

ՏԻԳ. Հիմա—կարելի է: Բայց յետոյ—կը սիրես:

ՀԲ. Ոչ մի ժամանակ:

ՏԻԳ. Իմ արելը, քո արելը—կը սիրես:

ՀՌ. ԵՐԵՔԻ:

ՏԻԳ. Ես քեզ ասում եմ, կը սիրես, որովհետեւ մէջ-տեղ փող է զընգում, փող...

ԱՆ. Բաս դու չես լսել, որ ասում են. «Շատ մի սիրիր, ատել կայ, շատ մի ատիր, սիրել կայ»: (Կարևոտես լուսիւն),

ՏԻԳ. Հապա ի՞նչպէս անենք, մերժե՞նք այն մարդուն: (Կրկն լուսիւն, Տիգրանը սկսում է յուզուել) Ես քեզ բան եմ հարց-նում:

ԱԻ. Աղջի, ինչո՞ւ ես պապանձուել...

ՏԻԳ. (Չեռքը խփելով սեղմնին.) Մի բան ասա, վերջապէս,

ՀՌ. Տէ՛ր-Աստուած, քանի անգամ ասեմ: Միթէ պարզ չէ: Իհարկէ, մերժել:

ՏԻԳ. Մերժել... Ի՞նչ հեշտ վճռեցիր:

ԱՆ. Էս աղջկան մի հարցնող լինի, թէ դժւ ով ես, դժւ... էնպէս է խօսում, կարծես շահզադէի թուը լինը: Էն մարդը, ուրիշ բան չէ, գնչէ ձեռին մի կարողութիւն ունի, մարդամէջ մի անուն ունի, բաս դու ի՞նչ ունես, որ էդպէս հպարտացել, հայիլ-մայիլ ես եղել վրադ... Փող ու բաժինքնվդ ես պարծենում, տեսնենք, թէ մի ուրիշ առաւելութեամբ, որ քիթդ էդքան վեր ես քաշել... Փառք Աստծու, մի հրեշտակի գեղեցկութիւն էլ չունես, որ ասեմ, հա, դրանով ես պարծենամ:

ՀՌ. Ես ոչնչով չեմ կամենում պարծենալ:

ՏԻԳ. Զէ, Հրանոյշ, չէ: Դու շատ թեթև աչքով ես նայում հարցի վրայ: Խօսքը քո՞ ամբողջ ապագային է վերաբերում: Զկարծես, որ այնքան էլ հեշտ բան է հիմիկուայ ժամանակում անփող աղջկան մարդու տալը... Եթէ հեշտ լինէր, դու վաղուց կարգուած կը լինէիր: Այն ինչ ժամանակդ բաւական անց է կացել: Այժմ լաւ դէպք է ներկայացել: Հարուստ տեղից քեզ ուզող կայ: Եթէ ձեռքից տաս, իմացիր, որ բանդ պրծաւ: Այնուհետեւ նստիր ու սպասիր, թէ մի ուրիշ ուզող դուրս կը գայ:

ԼՌ. Շատ էլ չեմ ցաւի...

ԱՆ. Սրա ընկերները հիմի բոլորն էլ իրանց գլխի ճարը տեսել են: Ամեն մէկը մի օջախի տէր է դառել, ջուխտ-ջուխտ երեխանների մայրութիւն է անում, տուն ու տեղը կարգին սարքած ինքն էլ մէջտեղ առօք փառօք բազմել է, ու ոչ ոք նրանց չի ասում, թէ աչքիդ վերևը յօնք կայ... Վայ ինձ, վայ ինձ. մենակ սա է մնացել էսպէս ձեռքը ծոցումը, հօրանց տանը նուուած:

ՀՌ. (մի կողմ) Օ՞հ, միշտ և միշտ նախատինք...

ՏԻԳ. Հրանոյշ, դու արի փեշիդ քարը վեր ածա ու մեղ

լսիր: Ինչքան չլինի, մենք քեզանից աւելի շատ ենք ապրած, աշխարհիս արև ու բարին քեզանից աւելի լաւ ենք հասկանում: Քո մեծ սխալը նրա մէջ է, որ դու կարծում ես, թէ առանց փողի սէր կը լինի:

ՀՌ. Ա՛խ, Աստուած... Ինձ ոչինչ չէ հարկաւոր, ոչ փող, ոչ սէր. ինձ միայն հանգիստ թողէք, ես ձեզանից միայն հանգիստ եմ ինգրում: Վերջապէս... ես չեմ կամենում մարդու գնալ:

ԱՆ. Ո՞նց թէ չեմ կամենում մարդու գնալ...

ՏԻԳ. Դա էն տեսակ բան է, որ քո կամքին թողնենք:

ԱՆ. Թանի քաղցր ենք խօսում հետը, էնքան ոտը առաջ է դուռում:

ՏԻԳ. (Յուցամատը խփելով սեղանին:) Հրանոյշ, ես ասում եմ, բանը համաձայնութեամբ վերջանայ, թէ չէ...

ՀՐ. Թէ չէ—բանութեամբ կը վերջանայ:

ՏԻԳ. Ես քեզ խորհուրդ եմ տալիս, որ ընդունես:

ՀՐ. Շնորհակալ եմ խորհրդիդ համար: Բայց... Զեմ կարող:

ՏԻԳ. Իսկ երբ մենք պահանջում ենք:

ՀՐ. Երբէք:

ԱՆ. Է՞սքան էլ ինքնառած:

ՏԻԳ. Լաւ իմացիր, Հրանոյշ, որ դու այս տան մէջ ոչ ձայն ունիս, ոչ իրաւունք և ոչ սեփական կամք: Ինչպէս կը կարգադրեն մայրդ և եղբայրներդ, այնպէս էլ կ'անես: Դու պարտաւոր ես հնագանդուել մեր կամքին! (Գնում է: Մտնում է Սամսոնը՝ կոկ հասնուած, երեսը մսրուր ածիլած եւ բիսերը սրած դէպի այտերը:)

## ՏԵՍԻԼ 12.

Աննա, Սամսոն, Հրանոյշ:

ՀՐ. Սամսոն, ես քեզ եմ դիմում, ի սէր Աստծոյ, պաշտպանիր ինձ... Սրանք ինձ կսմենում են ստիպել, որ ես համաձայնեմ ընդունել... այն... այն... մարդու առաջարկութիւնը...

ԱՆ. Տես կարող ես, արտասուք թափի՛ր... Սրտասուքիդ նայող չկայ:

ՍՈՍՈ. Հրանոյշ, մի՞թէ նա այնքան վատ է, որ դու...

ՀՐ. Այո՛, ես նրան երբէք չեմ կարող սիրել:

ՍՈՍՈ. Բայց դու պատճառ չունիս չսիրելու:

ՀՐ. Ես նրանից—խորշում եմ:

ՍՈՍՈ. Հիմք չունիս խորշելու:

ՀՅ. Սամսոն, ես զգում եմ նրանից, հասկանո՞ւմ ես դու  
այս խօսքը:

ՍԱՄՄ. Իզնւր, իզնւր:

ՀՅ. Ես նրա հետ չեմ կարող մի օր ապրել:

ԱՍՄՄ. Շատ լաւ էլ կարող ես, փառաւոր կերպով:

ՀՅ. Ա՛խ, Աստուած, սրանց խօսքը մէկ է երևում: Ես բու-  
լորովին մենակ եմ և անպաշտպան...

ՍԱՄՄ. Հրանոյշ, դու գուր ես հակառակւում...

ՀՅ. Սամսոն, ուրեմն դու էլ սրանց հետ ես... բոլորդ  
էլ իմ դէմ...

ՍԱՄՄ. Այո, որովհետեւ մենք բոլորս էլ քո բարին ենք  
ցանկանում: (Գնում է):

ԱՆ. Կերամը: Յոյսդ Սամսոնի վրայ էր: Դէ հիմի նստիր  
ու խելքդ զլուխոյ հաւաքիր: (Գնում է: Հրանոյշը մնում է մենակ):

### S E U H L 13.

#### Հրանոյշ (մենակ)

Օ՞հ, այս ի՞նչ կրակի մէջ ընկայ եաւ—Մինչկ ե՞րբ ես ստի-  
պուած պիտի լինեմ մաքառել սրանց հետ անձնական երջան-  
կութեանս համար: Բայց ի՞նչ եմ ասում: Միթէ միայն անձ-  
նական երջանկութեան... Ամեն մի քայլիդ, ամեն մի շար-  
ժուածքիդ, ամեն մի խօսքիդ համար պատասխան և հաշիւ  
պէտք է տաս սրանց... «Դու կամք չունիս», ասում եմ ինձ,  
«մեր կամքը օրէնք է քեզ համար: Այսպէս արա, քանի որ  
մենք այսպէս ենք կամենում: Միրիր, ուս որ մենք կ'ասենք,  
մենք այդ պահանջում ենք քեզանից»... Ի՞նչ դառը վիճակ—  
մնալ յաւիտեան սրանց ձեռին գերի, ձեռ ու ոտք կաշկան-  
դուած, առանց իրաւունքի, առանց հետեւելու սեփական հա-  
կումներիդ... Բարի Աստուած, ցոյց առւր ինձ մի ելք, ցոյց  
առւր ինձ իմ փրկութեան ճանապարհը: (Վերջին խօսքիրը նա  
արտասանում է աղօթող կոյսի դիրքով):

Վ Ա Բ Ա Գ Ո Յ Բ

## ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ԵՐԿՐՈՐԴ

Բեմը ներկայացնում է նոյն տեսարանը, ինչ որ առաջին գործողութեան մէջ, ժամանակը—հետեւալ օրը, իրեկնադէմ, Վարագոյքը բարձրանալիս՝ Աննան նոր մոմեր է դնում մոմակաների մէջ։

### ՏԵՍԻԼ 1.

(Անաս (մինակ)

Էն գետինը մտած Ալեքսանն էլ չեկաւ, որ սամավարը սրբէր վերջացնէր։ Բողազ պատուեց, էնքան գոռացի։ Առաւոտուանից է ասում եմ անիրաւին. այ տղայ սամավարը սըրըիր, այ տղայ, իրուկունը ժամանակ չես ունենալ... էնքան պահեց սատկածը, որ օրը տուեց մութն առաւ. Հիմի երբ պիտի սրբի, երբ զցի։ (Մտնում է Ալեքսանը՝ ձեռին մի զամբիւղ, որ լիրն է մրգեղինով):

### ՏԵՍԻԼ 2.

Անաս. Ալեքսան.

Ան. Այ, տղայ, էս մւր ես կորել, որ տուն չես գալիս։ Ոտղ կոտրուել՝ ճամբին էիր մնացել։ Օրը մթնեց, սամավարն էլ երբ պիտի սրբաւ։

Ալ. Այ խանում...

Ան. Ըն, ցաւս տամ քեզ...

Ալ. Ի՞նչ անեմ, այ խանում, բոլորդ էլ վռազացնում էք։ Մարդու գլխին խելք էք թողնում որ... Մէկը էստեղից է ձէն տ սլիս, մէկն էստեղից։ Սա էս է պահանջում, նա էս, Դանակշանգալն էի ուզում սրբել։ Սամսոն աղան եկաւ վրես գոռաց, «Ճօ, մունդրիկ, լուացարանը դադարէ է, իմ չես ջուր ածում»։ Գնացի, որ ջուր բերեմ, աղջիկ պարոնն է բղաւում։ «Անպիտան, կողիկներս երբ պէտք է սրբես»։ Մարդ գլուխ կը կորցնի էստեղ։ Չես իմանում, որն անես, որը թողնես։ Եւ քանի կտոր լինեմ, խանում, ես հազմը ձեռք ունիմ։

Ան. Լաւ, լաւ, հասկացանք. բաւական է։

Ալ. Թիշ առաջ էլ դեղն առայ՝ սահմավարը սրբեմ,

Տիգրան աղան գլխիս կանգնեց. «Այ տղայ, զամբիւլը վեր առ ըազար զնանք»: Ասի, աղա, ձեռիս բան կայ, թող վեր ջացնեմ, յետոյ: Ու նա էլ տարաւ բերաւ. «Հայվան, ինչ որ քեզ հրամայում եմ, էն արա»: Աստուած վկայ, խանոնմ, էն-քան աւանակ, հայվան էք ասել, որ դրուստ հայվան եմ դա-սել»:

Ան. Էլի սկսեց ճաճանակի պէս, վերջ չկայ: Գնա, զնա:

Ալ. Սրանք մւր տանեմ, խանոնմ:

Ան. Տար բուֆետը, ես էլ գալիս եմ: Բաս աղան մւր մեաց:

Ալ. Կանդիտերի մօտ մտաւ. գալետ պիտի առնէր:

Ան. Դէ տար, տար: Զամբիւլզն էղպէս կը զնես բուֆետի մօտ, ձեռ չես տայ: Ես կը գամ կը տեղաւորեմ:

Ալ. (Գնում է գուշիը Թափանարելով) բահ-բահ-բահ... Մարդ եմ առում, որ սրանց ուշունցներին դիմանայ: (Տեսնելով, որ տիկ-նոջ եփեն այն կողմն է:) Այ, ես էլ էսպէս կ'անեմ: (Զամբիւլի մի-ջից մի ինչ որ բան է վերցնում զցում բերանը եւ ծամելով հեռանում: Մտնում է Արամեանը:)

### ՏԵՍԻԼ Յ.

Աննա. Արամեան.

Ան. (մի կողմ) Ի՞նչ անժամանակ...

Ար. Տիկին, բարե՛ ձեզ: Ես եկայ ձեր պատասխանն ի-մանալու:

Ան. Ես ձեզ չէի՞ ասում, որ որդիքս...

Ար. Դուք խօսեցիք նրանց հետ:

Ան. Ինչպէս չէ: Բայց երկուսն էլ դէմ են:

Ար. Երկուսն էլ դէմ: Միթէ, ճշմարիտ, բեմը ձեր աշ-քում այնքան անարգուած է, որ անպատւութիւն էք համարում ձեզ համար, որ ձեր աղջիկը ոտ դնի նրա վրայ:

Ան. Բանը էդ չէ, պարմն: Ուրիշ պատճառ կայ:

Ար. Կարելի՞ է արդեօք իմանալ պատճառը, եթէ միայն դա դադանիք չէ:

Ան. Միթէ ոչինչ չէք լսել:

Ար. Ո՛չ, մւս մասին:

Ան. Էսօր Հրանոյշի նշանդրէքն է:

Ար. Ի՞նչ էք ասում, տիկին: Ես ոչինչ չեմ իմացել: Քոյլ առէք ուրեմն ձեր աշքը լուս անել:

Ան. Շնորհակալ եմ:

ԱՐ. Բայց միթէ նշանդրէքը կարող է խանդարել, որ նա...

ԱՆ. Նշանուած աղջիկը... թատրոնումը խաղմայ... դա սկի լսումծ բան է... Դա հօ անունը գետնով տալ է նշանակում... էդ էր պակաս... Զէ, չէ, չէ. բերան չքանաք դրս մասին...

ԱՐ. Ուրեմն ես միանդամայն յոյս կտրեմ:

ԱՆ. Միանդամայն... Մեր խօսքը խօսք է,—է՛հ, ինձ ներողութիւն կ'անէք, պատրաստութեան մէջ ենք, զլուխս խառը, ժամանակ չկայ... (Գնում է):

ԱՐ. Հրանոյշը նշանուում է... Ա՛յ քեզ նորութիւն: Է՛հ, ուրեմն ես այստեղ աւելորդ եմ: (Կամնում է՝ զնալու Այդ բոպէին մոնում է Հրանոյշը և կանում նրա ետեւից. «Պարոն Արամեան»: Արամեանը դրան մօտից հոտ է զառնում ուրախ):

#### S E U H I L. 4.

Հրանոյշ, Արամեան.

ԱՐ. Ա՛, օրիորդ Հրանոյշը:

ՀՅ. Բարեւ ձեզ:

ԱՐ. Շնորհաւորում եմ: Դուք արդէն նշանում էք:

ՀՅ. Ո՛չ, այդպիսի բան չկայ:

ԱՐ. Այս բովէիս ձեր մայրն ասաց: Իրր թէ մինչև անգամ այս երեկոյ նշանդրէք է... Սյնդէս շտապում էր, այնպէս զլուխը խառն էր, որ ես չկարողացայ մի երկու բերան խօսել հետու:

ՀՅ. Այն, բայց... թողնենք այս... Ես եկայ իսկապէս ներողութիւն խնդրելու ձեզանից, որ ձեր առաջարկած դերը չեմ կարող վերցնել:

ԱՐ. Ես շատ ցաւում եմ, օրիորդ: Ինձ թւում է, որ եթէ ես կին լինէի, ձեզանից աւելի քաջ կը լինէի:

ՀՅ. Այն, այդպէս ասում էք, որովհետեւ տղամարդ էք: Դժբախտաբար, մեզ՝ կանանց թոյլ չեն տալիս մեր սեփական կամքն ունենալ: Մենք հնարաւորութիւն չունինք մեր վիճակը անօրինելու ըստ մեր ցանկութեան: Մենք հնազանդ ենք մեր խնամակալներին, միենոյն է, թէ ովեր են այդ խնամակալները. ծնող, եղբայր, ամուսին թէ սկեսուր... Այն, գերիներ ենք մենք, խեղճ կանայքս, յաւիտենական գերիներ:

ԱՐ. Օրիորդ, թող այդ ասեն նրանք, որոնց միտքը կաշկանդուած է նախապաշտունքով, որոնց կարծիքով կինը ա-

ուանց տղամարդու մի հաս բայլ անել չէ կարող կեանքում,  
բայց դուք—ձեր գիտակցութեամբ հանդերձ...

ՀՌ. Ի՞նչ կարող եմ անել ես իմ գիտակցութեամբ հան-  
գերձ, ես՝ մի թոյլ և անօգնական արարածու... Բաւական է մի  
չնչին անհնազանդութիւն—և իմ վերջին կազն իմ ընտանիքի  
հետ արդէն խղուած է... Իմ դէմ կը զինուեն մայրս, եղբայրս,  
աղքականներս և ծանօթներս... Եւ այն ժամանակ արի դուրս  
եկ գրանց խօսքի տակից... Ես ուր գնամ այն ժամանակ, ում  
պաշտպանութեան դիմեմ...

ԱԲ. Շատ ափսոս, օրինրդ, որ դուք մերժում էք: Ես՝  
ճիշտն ասած, մեծ յոյս էի դրել ձեզ վրայ:

ՀՌ. Իսկ ես ինչպէս եմ ափսոսում, եթէ իմանաք... Ա՛խ,  
թատրոն—դա իմ իդէալն է: Երեակայում եմ, թէ ինչ մեծ  
հաճոյք է դերասանի համար (աւելի եւ աւելի ոգիւրուելով) հարիւ-  
թաւոր հանդիսականների առաջ երեալ բեմի վրայ, զգալ, որ  
այդ ըստէին ամենքն հիացած նայում են իրան, հետեւում են  
ամեն մի շարժուածքին, ամեն մի խօսքին... Ամբողջ թատրո-  
նը՝ կարծես մի հոգի և շունչ դարձած՝ համակուածէ քո զգաց-  
մունքով, դիւթական ուժով կարող ես իշխել ամենքի վրայ—  
ծիծաղեցնել, լացացնել և ոգեւորել.

ԱԲ. Այս, օրինրդ, դերասանի փառքը նախանձելի է, ո-  
քովիետև նա աղմկալից է և փայլուն, թէև շատ կարճատև:

ՀՌ. Այդ ճշմարիտ է: (Ռոպէական լուսթիւն):

ԱԲ. (Վեր է կինում, ժապալով) Ուրեմն, օրինրդ, ես հեռա-  
նամ ձեռնունամին:

ՀՌ. Հազար ներողութիւն եմ խնդրում:

ԱԲ. Պատիւ ունիմ: (Հրաժեշտ տալով գնում է, Հըանոյշը տը-  
խուր է եւ մտածմունքի մէջ. յետոյ սկսում է):

### S E U H L 5.

#### Հրանոյշ (մանակ)

Մենք չենք կամենում—և վերջացաւ... Եւ այսպէս կամաց-  
կամաց կը խլանայ, կը մեռնի իմ մէջ սէրը, ձգտումը դէպի  
բեմ... Գոնէ այս մխիթարութիւնն է մնում ինձ—կարդալ, ո-  
գեորուել և երազել: (Բաց է անում զիրքը եւ արտասանում):

«Մնաք բարով, լեռներ, սիրան արօտներ,

Դուք էլ մնաք բարով, խաղաղ հովիտներ,

ես էլ չեմ գալու այստեղ ման գալու,

Վերջին բարես եկայ ձեզ տալու:

Իմ ջրած դաշտեր, իմ տնկած ծառեր,  
 Աճեցէք զուարթ, շատ ու շատ օրեր՝  
 Մնաք բարով, ծմակներ, դուք պաղ աղբիւրներ՝  
 Եւ դու, արձագանք, հովտիս անոյշ ձայն,  
 Որ միշտ երգերիս պատասխանում էր:  
 Գնում է Յովկաննան անդարձ յաւիտեան:  
 (Կամաց կամաց անցնում է միւս սենեալը: Ոտանաւորի կիսումը Վարդուշը՝ կանկնած դրան մէջ՝ լում էր նրան ծաղրական դէմքով: Երբ Հրանոյշը հեռանում է, նաառաջ է գալիո):

## ՏԵՍԻԼ 6.

Վարդուշ (մնալի)

(Քրթիչո՞վ) Սրան նայեցէք: Այս երեկոյ նշանդրէքն է. Փոխանակ զուգուելու զարդարուելու, այստեղ դերաստ-նութիւնն է անում... հա-հա-հա... (մտնում է Աննան):

## ՏԵՍԻԼ 7.

Աննա, Վարդուշ,

Ան. Հը՛, ի՞նչ կայ էդպէս քչքչում ես... Երանի քեզ. ոչ խելք ունիս, ոչ դարդ:

ՎԱՐԴԻ. Ի՞նչ ես ուզում ինձնից, մայրիկ: Վա, ծիծաղեւլըն էլ արգելուած է:

ԱՆ. Գնա պատրաստուիր, ժամանակ է,

ՎԱՐԴԻ. Ի՞նչու ինձ ես ասում, մայրիկ: Հրանոյշը պիտի շտապի, ոչ թէ ես: Հօ ինձ չեն նշանում, այլ նրան:

ԱՆ. Նա իր համար զլուխը քաշ հագնուում է:

ՎԱՐԴԻ. Ո՞վ ասաց հագնուումէ: Հէնց այս ըոպէիս չէր այստեղ:

ԱՆ. Էստեղ ի՞նչ էր անում:

ՎԱՐԴԻ. Ի՞նչ պիտի անէր—դերասանութիւն:

ԱՆ. Ի՞նչպէս թէ դերասանութիւն:

ՎԱՐԴԻ. Այ նայիր. այսպէս կանգնած, զիրքը ձեռին,

բարձր ձայնով կարգում էր ու ինքն իր վրայ հիանում:

ԱՆ. Հիմի գիրք կարգալու ժամանակ է:

ՎԱՐԴԻ. Հէնց բանն էլ այդ է:

ԱՆ. (Չարացած) ես նրան գիրք կարդալ ցոյց կը տամ:

(Արագ անցնում է միւս սենեալը):

ՎԱՐԴԻ. Վայ Հրանոյշին... (Յուգուած մտնում է Հրանոյշը, գիրքը ձեռին). Հիմա սա ինձ չմեղաղի: (Գնում է):

## ՏԵՍԻԼ 7.

Հրանոյշ (մանակ)

Ես մուր փախչեմ, մուր կորչեմ, որ ազատուեմ այս հոգեհաններիցը... Մի բոպէ դադար չեն տալիս... Մաշեցին ինձ... Այս ի՞նչ դժոխքի մէջ եմ ես...

(Արագ մոնում է Աննան՝ սաստիկ դայրացած եւ խլելով գիրքը աղջկայ ձեռքիցը՝ շարտում է օդի մէջ):

## ՏԵՍԻԼ 9.

Աննա, Հրանոյշ.

ԱՆ. Դէ հիմի գնա ու կարդա...

ՀԲ. (Արդուուած) Մայրիկ...

ԱՆ. Հը՛, ի՞նչ կայ...

ՀԲ. Դու ինձ... յուսահատեցնում ես...

ԱՆ. Դու ես ինձ յուսահատեցնում, գու... Էս օյին է որ  
մեր գլուխը բերում ես...

ՀԲ. Մայրիկ, մեծ կին ես, աչքերդ արիւն է լցուել... Ինչի համար ես այդպէս բարկացած... Ես ձեզ քանի անգամ եմ  
ասել. մի կանչէք այդ մարդուն, մի կանչէք...

ԱՆ. Աղջի՛, ինձ ասա տեսնիմ. ինչո՞ւ ես էդպէս ներհակուել:

ՀԲ. Մայրիկ, ի՞նչ ես ուզում ինձանից:

ԱՆ. Ես ուզում եմ, որ էս բոպէիս գնաս ու պատրաստուիս  
փեսացուի գալուն:

ՀԲ. Ես նրա առաջ չպիտի դուրս գամ:

ԱՆ. Ուրեմն մտքումդ դրել ես մեզ խայտառակե՞լ:

ՀԲ. Ես մեղաւոր չեմ, եթէ...

ԱՆ. Աստուած սիրես, յիմար յիմար դուրս մի տա: Ո-  
չինչ չեմ ուզում լսել: Գնա ու պատրաստուիր: Դէ, շնուր արա:  
(Կամննում է ուժով տանիլ):

ՀԲ. Թողի ինձ, թող մայրիկ, թող, ասում եմ:

ԱՆ. Հրանոյշ, ախպէրդ կը զայ, էլ ձեռիցը չես պրծնի:

ՀԲ. Ի՞նչ պիտի անի: Զօ չի մորթելու:

ԱՆ. Կը մորթի էլ ու հոգիդ էլ կը հանի:

ՀԲ. Տէր Աստուած, զոռմվ էլ բան կը լինի: Ես չեմ ու-  
զում այն մարդուն, մայրիկ, չեմ ուզում:

Ան. Աղջիք, ասենք թէ էդ մարդը մի քիչ բո սրտովը չէ, լաւ Բաս բո խղճմտանքն ուր մնաց: Ես տանը մենակ դժւ ես: Զ՞ես իմանում, թէ քանիսի ճանապարհն ես փակած պահել... ՀՌ. Ե՞ս—մեմ ճանապարհն եմ փակած պահել:

Ան. Խնձանից էլ լաւ գիտես:

ՀՌ. Մայրիկ, ի սէր Աստուծոյ, պարզ խօսիր: Դու այնպիսի բան ասացիր որ..., Խնչպէս թէ ես ճանապարհ եմ փակել.. Օրինակ, մեմ, մեմ ճանապարհն եմ փակած պահել:

Ան. Հէնց մէկը—ախպօրդ:

ՀՌ. Տիգրանի:

Ան. Հա, հէնց մէկը Տիգրանի, Զեր հոգսիցը ծերացաւ խեղճ որդիս Մազերը սպիտակեցին, էնքան սպասեց ձեզ: Շուտով քառասուն տարեկան կը դառնայ, ու մինչև օրս չկարողացաւ մուրազին հասնի, մի հալալ կողակցի արժանանայ... Բաս էս խղճմտմնք է, քեզ եմ հարցնում:

ՀՌ. (Վիրաւորուած) Բայց ես ի՞նչ մեղք ունեմ այստեղ: Միշտէ Տիգրանը ի՞մ պատճառով է, որ չէ ամուսնանում: Դա նորութիւն է ինձ համար... ես չգիտէի, ճշմարիտ... Շատ զարմանալի է...

Ան. Լաւ, էդքան էլ միամիտ չես, էլի Վարդուշն ասի, կը հաւատամ:

ՀՌ. Բայց ես ինչով եմ նրան խանգարում: Թհաղ ամուսնայ, երբ կամենում է, ում հետ կամենում է: Ես միայն կ'ուրախանամ...

Ան. Կարծում ես, ախպէրդ խազնի վրայ է նստած, որ համ տունը պահի, համ ձեզ ուտացնի, համ կնկայ ու երեխաների դարդը քաշի...

ՀՌ. (Խորը վիրաւորուած) Ահա թէ ինչ... Ուրեմն խօսքը դրմ մասին է... (զնարկ աւելի եւ աւելի վոճկում է) ուրեմն ինչ որ անում է, իմ կերած մի կտոր հացն է անում... Դրան համար եմ ես ձեր աչքի փուշը դառել... (Արտասուբը սրբում է:)

Ան. Սամսոնն էլ էնտեղ է դէմ առել մնացել: Նրա էլ կարզուելու ժամանակն է: Է՞ն, ասենք թէ նա մի քիչ ջահէլ է, դեռ էլի կարող է սպասել: Բայց ի՞նչ պատասխան կը տաս երկնային դատաւորի առաջ, եթէ քո պատճառով պստիկ քոյրդ էլ մնայ տանը ու անջուր ծաղկի պէս թոռսի, չորանայ... Նրա մեղքի տակիցը, ասա, տեսնեմ, կարժղ ես դուրս զալ:

ՀՌ. Մայրիկ, պարտական մնաս, եթէ իմ պատճառով վարդուշին թողնես տանը և ուղղողին մերժես:

Ան. Յետք, ես կը թողնեմ, որ պստիկն իր ոտը մեծիցը առաջ դնի, մեծի անունը կոտրուի:

ՀՌ. Ի՞նչու պէտք է մեծի անունը կոտրուի: Բոլորովին աչ:

ԱՆ. Աղջի, չեն ասի, թէ երկի, մեծը մի պակասութիւն է ունեցել, որ կողքովս անցել են, պատիկին առաջ գցել:

ՀՌ. Խելօք ու հասկացող մայրերը երբէք այդպիսի բան չեն անում, փոքրիկին չեն անբախտացնում մեծի պատճառվ:

ԱՆ. Հէնց ամենից խելօքներն էդպէս կ'անեն: Ու յետոյ իմանում ես, թէ ի՞նչ կը լինի նրա դրութիւնը... Վայ էն տեսակ աղջկան... Զնորն ընկնի, լաւ չէ, նրա պէս քանբախտը:

ՀՌ. Մայրիկ, հաւատա, ինձ համար հազար անգամ աւելի լաւ է—երբէք չամուսնանալ, ծերանալ հայրենի տանը, միշտ հարազատների շրջանում, նոյն իսկ շունչը փչել եղբայրների ձեռքերի վրայ, այո, այդ հազար անգամ աւելի լաւ է ինձ համար, քան ամբողջ կեանքը կապել մի այնպիսի արարածի հետ, որից խորշում ես, որին երբէք չես կարող սիրել, որի հետ, հաստատ գիտես, մի հատ ուրախ օր չես տեսնելու, այլ դատապարտուած ես միայն կամաց կամաց հալ ու մաշ լինել... հապա ես մէզը չեմ, մայրիկ:

ԱՆ. Էլ ի՞նչ դարդ... Էդ էր մնացել, որ պառաւես ու հօրանցդ տանը բայդուշ դառնաս... (մոնում է Տիգրանը՝ ձեռին երկու թղթէ, արկղ)

## ՏԵՍԻԼ 10

Աննա, Տիգրան, Հրանոյշ.

ՏԻԳ. (Արկները տալով մօրը) Մայրիկ, սրանք վերցրու. խմորեղէն է: (Նկատելով Հրանոյշին) վահ, Հրանոյշ, դու դեռ այդ դրութեան ես: Ի՞նչու ես սկ հագել: (Նայելով ժամացոյցը եւ ցոյց տալով քրոջը) Տես, ժամը բանիմն է: Շուտով փեսացուն կը գայ, իսկ դու...

ԱՆ. Հը՛, հիմի արարմունքդ յայտնեմ Տիգրանին:

ՀՌ. Յայտնիք: Մածուկ բան չկայ այստեղ:

ՏԻԳ. Մայրիկ, բան է պատահել:

ԱՆ. Զէ, մի առանձին բան չի պատահել: Հրանոյշն է էլի, մի քիչ հակառակութիւն է անում:

ՏԻԳ. Ուրեմն դու դեռ խելքի չմս եկել, Հրանոյշ:

ՀՌ. Տիգրան, ես արդէն ասել եմ, հիմա էլ կրկնում եմ: Քանի դեռ ուշ չէ, յայտնեցէք այն մարդուն որ չգայ:

ՏԻԳ. Չը գմի:

ՀԲ. Այս, թող իզուր նեղութիւն չկրի: Միւնոյն է, եթէ գայ, ես ոչ նրա առաջը պիտի դուրս գամ և ոչ նրա բերած նշանն ընդունեմ:

ՏԻԳ. Հըմ... Շատ լաւ... Այդպէս էլ կ'անենք... Խսկոյն (ցոյց է տալիս Թէ կամնում է զնալ):

ԱՆ. Տիգրան, սրա խելքնվա ես ընկել:

ՏԻԳ. Բաս ի՞նչ... թողնենք հիւրերը հաւաքուին, փեսացուն գայ, և յետոյ նրանց առաջ մենք գետինը մտնենք... Ո՞ւ ես այդ չեմ կամենում... Գնա, գնա, ինչ կ'ուզես, արա: Դու ոչ մոսյը ես ճանաչում, ոչ եղբայր: Գնա, ես էլ քեզ չեմ ճանաշում:

ՀԲ. Դրանով ի՞նչ ես կամենում ասել:

ՏԻԳ. Այն, որ ես էլ Հրանոյշ անունով քոյր չունեմ:

ՀԲ. Ի՞նչպէս թէ չունես... Եթէ ես քո քոյրը չեմ, ուրեմն ես օտար եմ այս տանը, ուրեմն ես իրաւոնք էլ չունեմ այս տեղ մնալու:

ՏԻԳ. Ի՞նչպէս կ'ուզես, այնպէս հասկացիր:

ՀԲ. Այդ գէպքում աւելի լաւ է պարզ ասես, որ ես աւելորդ եմ այս տանը...

ՏԻԳ. Ես արդէն ասացի, ինչ որ հարկաւոր էր, եթէ քոյրը չէ խղճում իր եղբօրը, ի՞նչու պէտք է եղբայրը խղճայի քրոջը:

ՀԲ. Այդ եմ այդքան անխիղճ:

ՏԻԳ. Այն, դու... որովհետև դու ոչ ոքի չես խղճում, չես մտածում, թէ քո յամառութիւնը մեր է տանում թէ քեզ թէ մեզ բոլորիս Զես հասկանում, թէ քո հաճոյքին ծառայելով ի՞նչ անտանելի դրութիւն ես ստեղծել մեզ համար, ի՞նչպէս կապել, կաշկանդել ես մեր ամենքի ձեռ ու ոտք...

ՀԲ. Եթէ ես այդչափ անտանելի եմ, այդչափ հրէշաւոր եմ, էլ ի՞նչի էք սպասում. վերցրէք և ձեռիցս բռնած՝ ինձ փող նետեցէք:

ՏԻԳ. Վա, այս ինչ դրութիւն է, Տէր Աստուած... Ես հօչեմ կարող, ճշմարիտ, իմ ամրող կեանքը վեր զնել ձեղ համար: Տարին տասն երկու ամիս շան պէս չարչարուիր մի քանի կոպէկի համար որ վերջն էլ ձեռդ ընկածը բեր ածա սրանց համար 14 մանէթանոց նորածն կոշիկներ առնեն, 25 մանէթանոց գլխարկներ ծածկեն, 50 մանէթանոց դէյրաներ հագնեն, զուգուած փողոցները չափչին և աշխարհ զարմացնեն իրանց թանկագին զգեստներով...

ՀԲ. (Աշխատում է զսպել նեկիկանքը, ացերը լցուած են արտասունքով):

**Տիգ. Մղկում...**

**Ան.** Է՞ս էիր ուզում լսել, էլի:

**Տիգ. Մղկում այդպէս... Լաւ ես անում... Ես էլ եմ շատ մղկուցել, բայց ծածուկ, և դու չես տեսել իմ արտասուքը... Բաս մեղք չենք մենք, մեղ Աստուած չէ ստեղծել... Զէ որ ես էլ մարդ եմ, չէ որ ես էլ ունիմ իմ ցանկութիւնները, ես էլ եմ կամենում վերջապէս ապրել իմ ուզածի պէս, կեանքումս մի օր տեսնել... Իմ հասակի մարդիկ հիմա բոլորն էլ վաղուց ամուսնացած՝ որդոց տէր են դարձել, շրջապատուած սիրելիներով՝ նրանցով միսիթարւում են, նրանց շրջանի մէջ հանգիստ են գտնում... Խսկ ես—թնջի եմ նման... Շերութեան մօտեցած, մազերս սպիտակ, առողջութիւնս վեր դրած՝ դեռ նոր-նոր պիտի սկսեմ ապրել... Այ, հողը իմ գլխին... (Մեծում է իր զուկը):**

**ՀԲ.** (Վեր է կենում երերակով) Ներիր... Ներիր ինձ... (Յուսահատական հեկելկանքով նկտում է եղօր մօտ՝ ծնկացոք, կամենում է շարունակել, բայց արտասուրից խեղտուելով չէ կարողանում):

**Ան. Ա՛խ, որդիքս...**

**Տիգ.** Այս խօսքերը ես քեզ երբէք չէի ասի, բայց ինչ անեմ, ինձ հարկադրեցիր, ինձ ստիպեցիր, որ ասեմ, որովհետեւ... որովհետեւ... այս տեղս.. շատ էր լցուած ..

**ՀԲ.** (Կրկին դառը լացով) Ներիր... Ներիր ինձ. ամեն մի կտոր հացի համար, որ ես բերանս եմ դրել, ամեն մի շորի համար, որ հագել եմ, ամեն մի զարդարանքի համար, որ գնել եմ քո աշխատանքով... (Կտրում է վզի յուրունքաւոր մանեակը, որի հատիկները թափում են յատակի վրայ):

**Ան.** Էղ թնչ ես ասում, Հրանոյշ, քո կերածն էլ քեզ հալաւ, քո խմածն էլ...

**ՀԲ.** Ո՞չ, ասա. հարամ լինի քո կերածն էլ, քո խմածն էլ...

**Տիգ. Հրանոյշ...**

**ՀԲ.** Այո, դու ճշմարիտ ասացիր: Ես անտանելի դրութիւն եմ ստեղծել ձեզ համար, կապել, կաշկանդել եմ ձեր ամենքի ձեռ ու ոտը, փակել եմ ձեր ճանապարհը... Ես մի ճրիակեր եմ եղել այս տանը... (Կամենում է զնալ):

**Ան. Հրանոյշ, մեր զսացիր:**

**Տիգ. Հրանոյշ, մի պատասխան տուր վերջապէս:** Ասմ, թնչ անենք: (Պառւզա):

**ՀԲ.** (Դրան մօտից) Ես—խոստանում եմ շատ շուտով բաց անել ձեր բոլորի ճանապարհը:

**Տիգ. Արի ու մի բան հասկացիր:** (Մտնում է Սամսոնը, ձեռքին մի շքեղ ծաղկափունջ, իսկ իր կրծքի վրա կպցրած է մի թարմվարդ):

## ՏԵՂՄԱՆԻ 11.

Աննա, Տիգրան, Սամսոն.

ՍԱՄՄ. (Թարձր բռնելով ծաղկափունջը) Հրանոյշի համար...

Ան. Նա արժանի՞ է դրան, որ առել ես:

ՍԱՄՄ. (Զարմացած) Վա...  
Տիգ. Զարմանալի մարդ ես, Սամսոն: Այս ժրտեղ ես

ԴՊԱ:

ՍԱՄՄ. Աստուած սիրէք, ի՞նչ է պատահել, այդպէս  
թթուել էք: Մայրիկ:

Ան. Չի էլ մեռնում ձեր մայրիկը, որ միանգամից ա-  
զատուի իւր դարդիցը:

ՍԱՄՄ. Տէր, գեղա քեզ, Աստուած:

Տիգ. Տօ, մարդ Աստծոյ, դու երբայր չես: Քրոջդ նշան-  
դրէքն է, դու ժրտեղ ես:

ՍԱՄՄ. Բուլվարումը: Մեղքը բան է ման գալը:

Տիգ. Այստեղ մեր սրտներիցը արիսն է կաթում, մոլոր-  
ուած մնացել ենք ու չենք իմանում, թէ ի՞նչ անենք, որ մեր  
այն աննամուսին խելքի բերենք, սա քոծերի ետևիցն է թրւ  
գալիս բուլվարումը...

ՍԱՄՄ. Քոծերի ետևից... Դա իմ գործն է... Շատ լաւ էլ  
անում եմ... Մայրիկ, ի սէր Աստուծոյ, ասա, ի՞նչ է պատահել:

Ան. Էլ ի՞նչ կը պատահէր... Քրոջդ արարմունքը նոր ես  
իմանում:

ՍԱՄՄ. Ի՞նչ է արել, որ:

Ան. Փեսացուի առաջ, ասում է չպիտի դուս գամ:

ՍԱՄՄ. Գլուխը քամրը... Չի ուզում, չդուս գայ... Շատ  
հարկաւորս է... (Զարացած անցնում է միւս սենեալը):

## ՏԵՂՄԱՆԻ 12.

Աննա, Տիգրան.

Ան. Տիգրան, բաս ի՞նչ անենք:

Տիգ. Ցետաձգենք, մինչև որ տեսնենք, թէ...

Ան. Ախր փեսացուն հիմի կը գայ:

Տիգ. Կ'ասենք, նկրողութիւն, աղջիկը հիւանդացաւ: (Զան-  
զը տափս են):

Ան. Հողը գլխիս... Եկան: (Շուալ հեռանում է. մտնում է Զաքօն):

## ՏԵՍԻԼ 13.

Տիգրան, Զաքօ.

ԶԱՔՕ. Բարով, Տիգրան, ջան... Մի ձեռքդ խփիր, է...

ՏԻԳ. Զաքօ, փեսացուն գալիս է...

ԶԱՔՕ. Փեսացուն գալիս է, էս էլ ոնց է գալիս... Մի անտիկա բոլիեանտի մատանի է բերում, որ...

ՏԻԳ. Է՛՞, մեր դարդը մատանին չէ...

ԶԱՔՕ. Ի՞նչ հրամակցիր:

ՏԻԳ. Զաքօ, գիտես ինչ, այս ըռպէիս, աւանց ժամանակ կորցնելու, վաղեվազ պիտի գնաս փեսացուի մօտ...

ԶԱՔՕ. Հը...

ՏԻԳ. Ու կը ասես, որ չգայ...

ԶԱՔՕ. (Զարմանքից կարծիս սարսափած) Վաճի...

ՏԻԳ. Էլ զարմանալու ժամանակը չէ...

ԶԱՔՕ. Ախր ի՞նչ պատահեց:

ՏԻԳ. Ոչինչ... այնպէս... չյաջողուեց...

ԶԱՔՕ. Մեղա քեզ, Աստուած:

ՏԻԳ. Եթէ պատճառը հարցնի, կ'ասես աղջիկը յանկարծ հիւսնդացաւ:

ԶԱՔՕ. Յանկարծ... սատանի անկաջը խուլ, հօ ընկնաւոր չէ.

ՏԻԳ. Ի՞նչ ընկնաւոր, ի՞նչ ես խօսում:

ԶԱՔՕ. Ախր յանկարծ էլ բան կը լինի:

ՏԻԳ. Դէ որ եղաւ:

ԶԱՔՕ. Ես հիմի ի՞նչ երեսով նրա աչքին երևամ:

ՏԻԳ. Դէ, Աստուած սիրես, Զաքօ, շնւտ արա:

ԶԱՔՕ. Էլ ճարս ի՞նչ: Պիտի գնամ էլի:—Լաւ. բաս եղբ բերի նէանը:

ՏԻԳ. Զեմ իմանում, մենք իմաց կ'անենք... Դէ, Զաքօ, քեզ տեսնեմ, թե առ ու թոփիր:

ԶԱՔՕ. Վա, բանը շատ ծուռ է գնում: Աստուած վերջը բարի անի: (Դուան մօտից վերադառնալով) Տիգրան ջան, չարդ տանեմ, ինձ մի քիչ...

ՏԻԳ. Փհղ ես ուզում: Հը՛, առ, է, առ...  
(Նրան փող է տալիս) Միայն շնւտ արա...

ԶԱՔՕ. Շնորհակալ եմ: Ծտի պէս կը թուչեմ: (Շտապ հեռանում է:)

ՏԻԳ. Օ՛հ, հազիւ ազատուեցի: (Բարկացած անց ու դարձ է է անում: Մտնում է Աննան:)

### ՏԵՍԻԼ 14.

Աննա, Տիգրան.

ԱՆ. Զաքօն գնաց:

ՏԻԳ. Պատասխանը տարաւ:

ԱՆ. Հիմի փեսացուն ի՞նչպէս կը նեղանայ:

ՏԻԳ. Մրանից յԵտ, Ամեն բան վերջացաւ:

ԱՆ. Ուրեմն էն անզգամը մեզ բոլորիս, յաղթեց, իր ասձն արաւ:

ՏԻԳ. Բաս չՔ:

ԱՆ. Ը՛հ, գետինը մտնես, դու, Հրանոյշ:

(Մտնում է Վարդուչը):

### ՏԵՍԻԼ 15.

Աննա, Տիգրան, Վարդուշ:

ՎԱՐԴ. Մայրիկ, նշանդրէքը խանգամուեց:

ԱՆ. Աղջկայ երեսին որ մեռոն չլինի, նշանդրէքն էլ կը խանգարուի, ու...

ՎԱՐԴ. Ես էլ յիմարի պէս մի ժամ է հայելու առաջ կանգնած՝ զարդարում եմ: Հիմա զնանորից շորերդ փոխիր... թո՛... (Վարդուշը զնում է: Տիգրանը շարունակ անց ու դարձ է անումել զնալով աւելի ու աւելի բորբոքում է):

### ՏԵՍԻԼ 16.

Աննա, Տիգրան.

ՏԻԳ. Օ՛հ, ի՞նչպէս կատաղութիւնս բռնել է...

ԱՆ. Հանդարտուիր, որդիս: Ի՞նչ ես. արինդ պղտորում:

ՏԻԳ. Գլուխ եկած բանը մնց փչացրեց... նա էն աղջիկ տեղովը մեզ բոլորիս յաղթի, իր մատների վրայ խաղացնի մեզ... ը՛հ, ես նրան...

ԱՆ. Աչքներս լուս: Հիմի էլի բամբասամնքը կըսկսուի:

ՏԻԳ. Աստուած վկայ, սիրտս ասում է, գնա ու անզգամի մաղերիցը բռնած՝ տուր պատերին ու ջարդ ու փշուր արա...

ԱՆ. Մի անգամ որ աչքին երես, էլ չի համարձակուի մեր խօսքը գհտին գցել:

**ՏԻԴ.** Զէ... մինչև աղուս չթափեմ, ես չեմ հանդստանայ... (Սաստիկ զարացով, վճռաբար եւ արադ անցնում է միւս սենեակը):

**ԱՆ.** Ի՞նչ պիտի անի, տեսնես: Չգնայ ու ճիշտ որ իր ասածն անի: Տաք բնութիւն է, բարկանում է, Աստուած ա-զատի... (Յանկարծ, լսում է ապտակի բարձր ձայն եւ կանացի ճիչ, Մտնում է Տիգրանը՝ այրերն արիւն կոխած եւ չարութիւնից ծանածուած դէմքով):

**ԱՆ.** Տիգրան, ձեռքդ հօ դաճուեց խեղճ աղջկայ երեսին..: **ՏԻԴ.** Այս դեռ քիչ էր, դեռ քիչ էր նրան... (Տիգրանը զազանի պէս մրմրալով՝ անց ու դարձ է անում: Յանկարծ լսում է ատրճանակի պայթին: Տիգրանը քարացած կանգ է առնում: Սարսափած ներս է վազում Վարդուշը, քիչ յետոյ Սամսոնը):

### ՏԵՍԻԼ 17.

Անեա, Տիգրան, Վարդուշ, քիչ յետոյ Սամսոն:

**ՎԱՐԴԻ.** Շնուտ հասէք... Տիգրանի ատրճանակով... Հրանոյ-ը... Հրանոյը...:

**ԱՆ.** (Գլուխ տալով) Վայ, հողը իմ գլխին... (Շոտապ զնում է, նոյնպէս Վարդուշը: Վշտահար մտնում է Սամսոնը):

**ՍԱՄՍՈՆ.** Բժիշշկ, բժիշշկ... (Վազեվազ դուրս է գնում):

**ՏԻԴ.** Ա՛խ, Հրանոյը... (Անցնում է միւս սենեակը):

Վ Ա Ր Ա Գ Ո Յ Թ

---

## ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ԵՐՐՈՐԴ

Տեսարանը մնում է անփոփոխ, Երկրորդ գործողութիւնից յետոյ մինչև զբարդութեանցել է մօտ երկու ամիս ժամանակամիջոց։ Ժամանակը կէսօր։

### S E U H L 1

Սամսոն, Վարդուշ. (Երկուսն էլ դրսի շորով)

ՍԱՄՍ. Վարդուշ, քիչ առաջ այն ի՞նչ նամակ ուղարկեց Հրանոյշը...

ՎԱՐԴ. Նամակ, ես ոչինչ չեմ իմացել։

ՍԱՄՍ. Հապաւ: Մի ծրարած նամակ, Տուեց Ալեքսանին, թէ տար, բայց մեւ—Հրանոյի։

ՎԱՐԴ. (ժապալով) Կարելի է, մէկի վրայ սիրահարուել է։

ՍԱՄՍ. Ով գիտէ, Կարող է պատրահել։ Հիւանդիւթիւնից յետոյ այնքան է փոխուել Հրանոյշը, որ կարծես մի 16 տարեկան ուրախ և աշխոյժ աղջիկ է դառել։ Ա՛, լանւմ ես—երգում է... Անպիտանի ձայնն էլ լաւացել է։

ՎԱՐԴ. Ես Ալեքսանից պիտի հարցնեմ։

ՍԱՄՍ. Դու պատրաստ ես, չէ՞ Ուրեմն զնանք կոնցերտի համար տոմսակներ վերցնենք։

ՎԱՐԴ. Ի՞արեկէ, կառքնի։

ՍԱՄՍ. Ո՞չ, հօ թատրօն չենք զնում։ Այսուեղ մեզ մօտ խանութում վաճարում են տոմսակները։

ՎԱՐԴ. Քանի հատ պիտի վերցնես։

ՍԱՄՍ. Երեքը, ինձ, քեզ և Հրանոյշին։

ՎԱՐԴ. Կարելի է, Հրանոյշը չի դալիս։

ՍԱՄՍ. Կը հարցնենք։

ՎԱՐԴ. (դոնից) Հրանոյշ, այս երեկոյ դու կոնցերտ չես գնալու։ (մոնում է Հրանոյշը)

### S E U H L 2.

Սամսոն, Հրանոյշ, Վարդուշ.

ՀՌ. Ի՞նչ ասացիր, Վարդուշ։

**ՍԱՄՄ.** Այս երեկոյ լաւ կոնցերտ կայ: Մենք գնում ենք:  
Քեզ համար էլ տոմսակ վերցնեմ, չե՞, Հրանոյշ:

ՀԲ. Ես... չգիտեմ, ճշմարիտ, գամ թէ ոչ:

**ՍԱՄՄ.** Իհարկէ:

ՎԱՐԴ. Ի՞նչ պիտի շինես տանը:

ՀԲ. Լաւ, վերցրէք:

**ՍԱՄՄ.** Կ'ուղես, արի միասին գնանք, հմա:

ՀԲ. Ոչ, ես չեմ կարող, ես սպասում եմ մէկին:

**ՍԱՄՄ.** Այդ ժամ էք սպասում, օրինրդ:

ՀԲ. (Փատարով) Կը գայ, կ'իմանաք:

**ՍԱՄՄ.** Ա՛խ, դու... ծածուկ, ծածուկ բանե՞ր ես անում...  
Զլինիք, սիրահարուել ես:

ՀԲ. Այս, թռւնդ:

**ՍԱՄՄ.** Ո՞ւս վրայ, թոյլ տուէք հարցնել:

ՀԲ. Յետոյ կ'իմանաք:

**ՍԱՄՄ.** Օ՛յ-օյ-օյ... Այս ի՞նչ գաղտնիքներ են...

**ՎԱՐԴ.** Դէ գնանք, գնանք, Սամսոն: Տոմսակները կը  
սպասուին, մենք կը մնանք առանց տոմսակի:

**ՍԱՄՄ.** Գիտէք ինչ, առում եմ ուղղակի մի օթեակ վերց-  
նեմ:

\***ՎԱՐԴ.** Ի՞նչ լաւ կ'անես... Օթեակում փառաւոր կը բազ-  
մենք ու...

ՀԲ. Ոչ, օթեակը թանկ է:

**ՍԱՄՄ.** Զանազանութիւնը չնշին է:

ՀԲ. Բայց և այնպէս, ի՞նչ հարկաւոր է:

**ՎԱՐԴ.** Ո՛չ, ինչո՞ւ, ափսոս չե՞ օթեակը...

**ՍԱՄՄ.** Իհարկէ: Թղթախաղում տարած փող է—թող  
գնայ, օթեակ կը վերցնեմ: Գնանք, Վարդուշ:

**ՎԱՐԴ.** Շիշ... (Սամսոնը եւ Վարդուշը գնում են):

ՀԲ. Ա՛խ, Վարդուշ, որքան միամիտն ես դու... (Մտնում է  
Ակեքսանը):

### S E U Ի L. 3.

Հրանոյշ, Ալէքսան.

ՀԲ. Նամակը յանձնեցի՞ր Արամեանին:

ԱԼ. Այն:

ՀԲ. Ի՞նչ ասաց:

ԱԼ. Ես բոպէիս կը գայ:

ՀԲ. Շատ լաւ: Դու գնա բանիդ: (Ակեքսանը գնում է):

## ՏԵՍԻԼ 4.

Հրանոյշը. (մէսակ)

Նա կը գայ շուտով իմ վիճակը կ'որոշուի: Ա'խ, երանէ թէ յաջողուի... Որքան երջանիկ կը զգամ ինձ... ինչծւ այս ռախտաւոր միտքը աւելի առաջ չծագեց իմ գլխում... Ես այս բովէիս, ով գիտէ, մի անուն կ'ունենայի: Ոչ այն գէպը տեղի կ'ունենար, ոչ ես ընտանիքիս հետ բամբասանքի առարկայ կը դառնայինք... Ի՞նչ նախապաշարմունք, ի՞նչ յիմար երկիւլ կաշկանդել էին ինձ... Միթէ ծառայելով մի ազնիւ, գեղեցիկ գործի, ես անպատճութիւն կը բերէի իմ հարազատներին... Դա հազար անգամ աւելի լաւ չէր ինձ համար, քան թէ օրն ի բուն պարապ յօդնել և կեանքը տեսնել միայն ուտել -խմելու և զարդարուելու... մէջ... (ցնցուկով) Ռտաձայնն է կարծեած նա է... Միրտո ինչպէս սկսեց բարախել... (մտնուի, է Արամիանը:)

## ՏԵՍԻԼ 5.

Հրանոյշ, Արասեան:

Ա. Օրիորդ Հրանոյշ... (Արագ մօտենաք | Երկու ձեռքո | սեղմում է նորա ձեռքք): Դուք ուրեմն, նորից կենդանացաք:

Հ. Այն, ինչպէս տեսնում էք: Ես մահուան դուքը բաղնեցի, բայց բաց չարին:

Ա. Դուք վերածնուեցիք, օրիորդ, ի մեծ ուրախութիւնն ձեր բոլոր ծանօթների:

Հ. Այն, Ես—վերածնուեցի:

Ա. Բայց անկողնուն երկար ծառայելուց յետոյ:

Հ. Համարեա երկու ամիս:

Ա. Այդպիսի բան կ'անեն, օրիօրդ: Ափսոս չէ ձեր թանկագին կեանքը, որ դուք կամեցաք զոհել Հաւատացէք, երբ լուրը տարածուեց քաղաքում, մենք ձեզ ինչպէս խղճացինք, ինչպէս ախ ու վախ բարձրացաւ... Գիտէք, առաջին օրը խօսում էին, որ դուք՝ արդէն:

Հ. Մեռած եմ:

Ա. Այն: Մինչև անգամ պատրաստուեմ էինք գալ ձեզ մօտ և մեր ցաւակցութիւնը յայտնել. ձեր ընտանիքին:

ՀՌ. Ի՞նչ էք ասում ։ (Ծնծաղում է) Դա նորութիւն է ինձ համար։

ԱԲ. Ճշմարիտ խօսք։ (Կարհանուել լոռվիւն) Բայց թոյլ տու-  
էք հարցնել, օրիօրդ թնջու այդ քայլն արիք։ Զանձրացել  
էիք կեանքից։

ՀՌ. Համարեա թէ... Ուրիշ պատճառներ էլ կային...

ԱԲ. Այն... բայց այնուամենայնիւն, թնջու կարելի է...  
Մարդ ափսոսում է նոյն իսկ սրբուն վարդը գետին ձգել, հիա-  
նում է վրան, կացնում է կրծքին, ափսոսում է, երբ թառա-  
մում, է նա. իսկ դուք ծաղկափթիթ և առակը կամեցաք թառա-  
մեցնել, ձեր մատղազ կեանքը, առանց խնայելու, գնդակի մի  
հարուածով վերջացնել... Ի՞նչ ասել է ինքնառպանութիւն...  
Դու հօ մարդկային անմտութեան գագութնակէտն է... Թող ձեզ  
պահէք գոնէ Համլետի՝ մահուան երկիւլը այն ռանյայտ աշ-  
խարհի պառաջ, որտեղից ոչ մի ճամբորդ չէ վերադարձել։

ՀՌ. Այն, այժմ ես ձեզ եետ համաձայն եմ, որ դա այս  
մտութիւն էր բայց ես չեմ զղջում դրա համար։

ԱԲ. Ի՞նչպէս։

ՀՌ. Այնպէս։ Դա մի անհրաժեշտութիւն էր, որ պիտի  
կատարուէր։

ԱԲ. Ես ձեզ չեմ կարող հասկանալ, օրիօրդ։

ՀՌ. Ես մինչև անգամ ուրախ եմ, որ...

ԱԲ. Մինչև անգամ ուրախի...։

ՀՌ. Այս, որովհետեւ այդ դժբախտ դէպքը յեղաշրջեց իմ  
հողին, մի մեծ և օգտաէտ դաս տուեց ինձ, որ ես երբէք չեմ  
մոռանայ։

ԱԲ. Այդ մտքնվ էք ասում, որ ուրախ էք։

ՀՌ. Այն։ Այն ի՞նչ անտանելի ցաւեր էին, որ կրում էի  
ես առաջին օրերը... Դողս բննում է, երբ յիշում եմ... գնդակը  
նստել էր այստեղ, ձախ ուսիս մէջ։ Մինչև որ բժիշկներ կը  
հանէին, ես տասն անգամ մեռայ և տասն անգամ կենդանա-  
ցայ... Իսկ յետոյ, երբ գիտակցութիւնս վերականգնեց, ի՞նչ  
սիրա մաշող և սկ մտքեր պաշարեցին ինձ... Հետո միայն այն  
երեխնը, որ այս բոլոր տանջանքներին հետևելու է ուստով ո-  
չնչութիւն, խաւար և սառը գերեզման, ի՞նչպէս էր քանդում,  
տակն ու վրայ անում իմ ներքը... Ի՞նչպէս էի ինքս ինձ ա-  
ռիծում... Բայց հազին առողջանալու առաջին յոյաց վառուեց  
իմ մէջ, դրա եետ միատին զարթնեց և կեանքի տեսչը, չիս  
կարու զդացի գարձեալ կատայտ երկնքի, պայծառ արկից ըլ-  
ուութեան ներդաշնակ հնչիւմների և այն ամենին, ինչով քաղցր  
և սիրելի է կեանքը... Ես կամեցայ նորից ապրել, ի՞նչպէս էլ

լինի, միայն թէ ապրել... Միայն թէ շնչել, տեսնել, զգոլ և մտածել...

ԱՐ. Այժմ ես ձեղ լաւ հասկացայ:

ՀՐ. Եթէ ես, կազդուրուելուց յետոյ, մնայի նոյնը, ինչ որ առաջ էի.—մի թոյլ, երերուն, անվճուական արարած,—այն ժամանակ աւելի լաւ էր, որ ես խպառ ոչնչանայի... որովհետեւ, իսկապէս ինչ էի դրանից առաջ—մի աւելորդ իր, որ զուր տեղ է բռնում աշխարհում, մի խեղճ էակ, առանց սեփական կամքի, նախապաշարմունքով կաշկանդուած, անընդունակ մի համարձակ քայլ անելու, որը զուրս է առօրեաց կեանքի հասկացողութեանց շըջանավից:

ԱՐ. Ահա ուրեմն ինչի համար էք ուրախ:

ՀՐ. Ես ուրախ եմ մանաւանդ նրա համար, որ այժմ զիտեմ, թէ ինչպէս պէտք է ապրել ես զտայ իմ կեանքի ճանապարհը ես այժմ կամենում եմ և կարող եմ ապրել մի նոր, զիտակցական և աշխատաւոր կեանքով:

ԱՐ. Այդ շատ և շատ ուրախալի է, օրինարդու եւ, իսկապէս, մեծ փոխուխութիւն եմ նկատում ձեղ վրայ: Դուք այժմ աւելի նիհարել, զունատուել էք, բայց դրա փոխարէն, մի այնպիսի զարմանալի փայլ են ստացել ձեր աշքերը, որ առաջ չկար... Ձեր հայեացքի մէջ ես այժմ տեսնում եմ մի տեսակ առողջ կենսուրախութիւն, մի ինչ որ առնական վնասկանաւթիւն:

ՀՐ. Այդ ճիշտ է: Այն, ինչ որ առաջ ես չէի համարձակւում մտքովս անգամ անցկացնել, այժմ վճռուած է վերջառականապէս, և հէնց այդ նպատակով էլ ձեղ ինդրեցի ինձ մօռա:

ԱՐ. Բանը ինչնումն է, օրինարդ:

ՀՐ. Ես ձեղ այս ըոպէիս կը բացատրեմ:

ԱՐ. Ուշագրութիւնս լարած՝ լսում եմ, օրինարդ:

ՀՐ. (Գտուարանալով) Գիտէք ինչ, պարհն Արամեան... Ես մի... առաջարկութիւն... կամ աւելի ճիշտ... մի ինդիքք ունիմ...

ԱՐ. Խնդիբը:

ՀՐ. Այս, մի ինդիքք, Գիտէք... ես վճռել եմ նուիրաւել բեմին...

ԱՐ. (Զարմացած) Նուիրուել բեմին:

ՀՐ. Այս: Ձեղ էլ յայտնի է, պարհն Արամեան, թէ ես ինչպէս եմ սիրում թատրոնը... Թատրոնը ես համարում եմ մի շատ բարձր և վեհ հաստատութիւն... դա հոգու կրթարան է, որտեղ իսկապէս որ զտւում, մաքրում են մեր զգացմունքները, և մենք սովորում ենք սիրել գեղեցիկը և առաքինին և առել

աղեղը և արատը: Ես միշտ երանի եմ տուել նրանց, որոնք ամեն բան ձգել են և նուիրուել այդ պաշտելի հաստատութեան: Ահա ինչու ես վճռեցի նոյնպէս թողնել ամեն ինչ և գնալ իմ ոիբած աստուածութեան ետեից:

Ա. Օրինրդ, ես ապշած եմ:

Հ. Ի՞նչու:

Ա. Դուք դժուարանում էիք մասնակցելու մինչև անգամ սիրողների մէկ ներկայացմանը, և այժմ...յանկարծ...:

Հ. Ոչ, իմ վճռուը յանկարծակի չէ եղած. մինչև այդ ես շատ մտատանջուել եմ և ինքս իմ դէմ մաքառել... (Վայրկենական լուսմիւն) Բայց դուք լուր էք և ոչինչ չէք ասում:

Ա. Օրինրդ, թոյլ տուեք հարցնել, արդեօք դուք լմւ մտածել էք ձեր անելիք քայլի մասին:

Հ. Այն, մտածել եմ... (կասկածով) Բայց դուք մի տեսակ էք... դուք ինձ խորհուրդ չէք տալիս...

Ա. Այսինքն, ոչ թէ խորհուրդ չեմ տալիս, այլ... այլ...

Հ. (Վշացած) Պարոն Արամեան, խնդրում եմ անկեղծ եղք ինձ հետ...

Ա. Ես ձեզ հետ անկեղծ չեմ:

Հ. Ես կամենում եմ ասել, որ պարզ խօսէք ինձ հետ, չքաշուեք ոչ մի բանից, ասացէք այն, ինչ որ մտածում էք: Ես կարծում էի, թէ ձեզ կ'ուրախացնեմ իմ այս վճիռն յայտնելով, այն ինչ դուք... այնպէս սառը վերաբերուեցիք...

Ա. Հաւատացէք, օրինրդ, որ ես...

Հ. Գուցէ դուք ինձ համարում էք անընդունակ, զուրկ բեմական ձիրքից, գուցէ ես մոլորուած եմ միայն... Այն ժամանակ ուրեմն... ներեցէք, եր ես...

Ա. Օրինրդ, ես ինչպէս կարող եմ այդպէս մտածել, երբ ես ինքս ձեր գնահատողներից մէկն եմ և քանիցս անգամ բացարձակ յայտնել եմ իմ կարծիքը ձեր մասին: Ե՞ս չէի, որ ասում էի, թէ բաւական է ձեզ մի բանի տարի փորձուել բեմի վրայ, և դուք կը դառնաք առաջնակարդ դերասանուհի... Ուրեմն այժմ ես ինչպէս կարող եմ ձեզ համարել անընդունակ: Միթէ դուք կարծում էք, որ ես այն ժամանակ միայն շողոքորթութիւն էի անում:

Հ. Ոչ, ներեցէք, ես այդ չեմ կամենում ասել: Ես միայն զարժանում եմ, որ դուք մի տեսակ անտարբերութեամբ վերաբերուեցիք դէպի իմ դիտաւորութիւնը:

Ա. Օրինրդ, ուղիղ ասած: Ես մի կողմից ուրախ եմ ձեր վճուի համար, միւս կողմից՝ վարանում եմ ձեզ խորհուրդ տալ:

ՀՌ. ԽՇԱՑՈՒ:

ԱՐ. Ահա թէ ինչու Մեզանում բեմական առարկը, որքան էլ հրապուրիչ կողմեր ունենայ, քանի որ նո մեղ տալիս է, երկար տարիներից յետոյ, փառք և անուն և նոյն իսկ փոքրիկ ապահովութիւն, այնուամենայնիւ ծածկուած է փուշ ու տատասկով: Արդեօք ձեզ յայտնի է մեր անզրկուլիսեան կեանքը... Ճանաչմաւ էք արդեօք այն մթնոլորդը, որի ողը պիպի շնչէք... Գիտէք դուք, թէ որքան թանկ է նսառում մեջ մեր իւրաքանչիւր բայլը գէպի առաջ... Կ'ունենմք արդեօք այնքան ոյժ և կարողութիւն, որ զիմանաք այն բոլոր բանսարկութիւններին, չար նախանձին, չկամութեան, որոնք անպակաս են գեղարուեստի աշխարհում...

ՀՌ. Խմ կարծիքով, գեղարուեստը բարձր է բոլոր բանսարկութիւններից, և չար նախանձից, և մարդկային չկամութիւնից:

ԱՐ. Ենթադրենք մի բոպէ, որ դուք կարողացաք բարձր մաս այդ բորբոքութիւնց Բայց կայ և ուրիշ հանգամանք: Դա ապահովութեան ամիծեալ հարցն է: Մենք, դերասաններս, անապահով ենք, մանաւանդ, իրք դեռ ոչ մի անուն չունենք և, այս պէս ասած մեր ոտը դեռ չենք հաստատել բեմի վրայ: Մենք միշտ և միշտ ենթակայ ենք ամեն տեսակ պատահարների: Զրկանքը, նեղութիւնները մեր անբաժան ուղեկցներն են, որոնք, սւրուականների պէս, հետևում են մեղ ամեն տեղ:..

ՀՌ. Բայց դուք հօ տանում էք այդ բոլոր նեղութիւնները, ես էլ կը տանեմ, ես էլ կ'ունենամ այդքան քաջութիւն:

ԱՐ. Օրինադ, դուք, ճշմարիտ, ինձ զինաթափ էք անում ձեր զարմանալի վճռականութեամբ: Եթէ այդպէս է, համեցէք —ելէք ասպարէզ: Ես ձեզ ի բոլոր սրտէ շնորհաւորմաւ եմ ձեզ այդ համարձակ քայլի համար:

ՀՌ. Ուրեմն—ինձ ընդունմամ էք...

ԱՐ. Ամենայն ուրախութեամբ:

ՀՌ. Շնորհակալ եմ, շատ շնորհակալ եմ:

ԱՐ. Ամեն բոպէ, երբ կամենաք, Մենք պատրաստ ենք:

ՀՌ. Կրկն շնորհակալութիւն: Ի՞նչքան ուրախ եմ ես:

ԱՐ. Բայց մի բան պէտք է ասեմ, ձեզ, օրինորդ: Մենք արդէն վերջացրել ենք մեր այստեղի ներկայացումները: Այժմ պիտի գնանք գաւառները: «Աղէ ուրեմն, թափտականդ Ագամթէր»...

ՀՌ. Ես էլ կը գամ ձեզ հետ...

ԱՐ. Մենք վաղն և եթ գնում ենք:

ՀՌ. Պատրաստ եմ և ես:

Ար. Հաստամատ Խօսք:

Հր. Այն:

Ար. Հա, իսկ ձերմնք, ձեր տանեցիք...

Հր. Նրանք, իհարկէ, կը հակառակուեն:

Ար. Եւ կարող են—անախորժութիւններ ծագել:

Հր. Թող ծագին: Չուրն ընկնողը անձրկից չի վախենայ:

Ար. Սակայն—այդ ձեր գործն է: Արէք, ինչպէս կ'ուզէք: Գուլով մեղ, մենք ուրախ կը լինենք, որ մեր խմբի մէջ մի նոր և թարմ ոյժ կ'աւելանայ: Իսկ առ այժմ... (վեր է կենուու)

Հր. Մինչև գնալներս մենք կրկին կը տեսնուենք:

Ար. Այն, այն: Իսկ դուք այդ միջոցին ձերոց հետ խօսեցէք, նորից ծանր ու բարակ մտածեցէք ձեր անելիք քայլի մասին, որպէս զի յետոյ, ապազայում, չզղալու:

Հր. Երբէք:

Ար. Տայ Աստուած, որ առիթ չունենանք զղալու:

Adio:

Հր. Ց'տեսութիւն:

(Արևմտանը գնում է: Հրանոյշը ուրախ է, բայց միևնուն ժամանակ մուախոն: Կարճատել լուսթիւնից յետոյ):

## ՏԵՍԻԼ.

Հբանոյշ (մնակ)

Մյն, ինչ որ մի ժամանակ երազ էր թւում ինձ, այժմ գառնում է իրողութիւն: Կարծես, թևաւորուել եմ ես, և ինձ մնում է միայն թափ տալ թևերս և բարձրանալ... (Մտախոհ) բայց ախ, ես նախատեսնում եմ մի սարսափելի փոթորիկ, որ պիտի բարձրանայ իմ դէմ... դարձեալ սրտնեղութիւն, դարձեալ նախատինք... (Կարճատիւ լուսթիւն, յետոյ աշխոյժ) բայց ոչինչ: Վերջին անգամ էլ կը լսեմ ես սրանց նախատինքը, որին այնքան սովոր եմ, և այնուհետև—վերջ իմ տանջանքներին... Այսպէս ուրեմն վաղը մենք գնում ենք... Դէս, Մինյօն, յառաջ և յառաջ...

«Գիտես արդեօք այն աշխարհը,

Ուր կիտրոնն է ծաղկում,

Կանաչագեղ թաւուաի մէջ

Պսկի նարինջ վարվում...

(Կուռում է բիմի հոտեւ Սամսոնի ձայնը):

Սամսոնը... Մի անգամ էլ, մուրացկանի պէս, ձեռքս կը մեկնեմեղքօրս, և դա կը լինի վերջին անգամ: (Մտնում են Սամսոնը եւ Վարդուշը: Վարդուշը տռանց կանգ առնելու անցնում է միւս սննհակը, իսկ Սամսոնը մնում է):

### ՏԵՍԻԼ. 7.

Հրանոյշ, Սամսոն,

ՍԱՄՍՈՆ. Տոմսակն արդէն վերցրինք: Աջակողմեան չորրորդ օթեակ:

ՀՏ. Սամսոն, ես քեզանից մի բան պիտի խնդրեմ:

ՍԱՄՍՈՆ. Խնդրիր երկուսը:

ՀԲ. Ինձ... փող է հարկաւոր:

ՍԱՄՍՈՆ. Շատ, թէ քիչ:

ՀԲ. (Ժպտալով) Շատ:

ՍԱՄՍՈՆ. Հարիւր:

ՀԲ. Ո՛չ, այդ շատ է:

ՍԱՄՍՈՆ. Եօթանասուն, վաթսուն, ինչքմն տամ, ես չգիտեմ:

ՀԲ. Եթէ կարողանաս յիսուն րուրլի տալ, ես այնպէս շնորհակալ կը լինիմ քեզանից... մինչև մահս...

ՍԱՄՍՈՆ. Հրանոյշ, եթէ դու միշտ այդպէս պարզ լինես, այդպէս ուրախ, ես քեզանից, Աստուած է վկայ, ոչինչ, ոչինչ չեմ ինայի... (Համբեկո լ դրամները) Բարեբախտաբար, մօտս քո ուզածիցն էլ աւելի է: Կ'ուզես, բոլորը վերցրնեւ:

ՀԲ. Ո՛չ, յիսունը լիովին բաւական է:

ՍԱՄՍՈՆ. Ահաւասիկ: (Տալիս է) Բայց ի՞նչ պիտի անես, կարելի՞ է հարցնել:

ՀԲ. Մի քանի բաներ պիտի առնեմ ինձ համար և մի լաւ ընծայ բժշկին, որ ինձ կենդանացրեց:

ՍԱՄՍՈՆ. Կեցցես, լաւ բան ես մտածել: Բայց քեզ համար ինչ պիտի առնես, օրինակ: Երկի, նոր գլխմբրկ:

ՀԲ. Ա՛յ հիմա կ'առնեմ, կը բերեմ տուն—կը տեսնես:

ՍԱՄՍՈՆ. Դարձեալ գաղանիքներ... է՛հ, շատ լաւ, շատ գեղցիկ: Գնա և առ, ինչ սիրտդ կը տայ:

ՀԲ. Ես իսկոյն կը վերադառնամ: (Գլխարկը ծածկելով, զնում է: Դրան մօտնց ատում է խորնրդաբար). Շուտով ամեն բան կ'իմանաք: (Հուանում է):

ՍԱՄՍՈՆ. Այս ի՞նչ հանելուկներ են, Տէր Աստուած:

(Մտնում են Աննա եւ Վարդուշ):

## ՏԵՍԻԼ 8.

Աննա, Սամսոն, Վարդուշ:

Ան. Սամսոն, ուր գնաց Հրանոյշը:

ՍԱՄՄ. Խանութի: Բժշկի համար ուզում է մի լաւ ընծայ առնել:

Ան. Իբր թէ նրան քիչ փող ենք տուել...

ՍԱՄՄ. Երկու հարիւր մանէթը շմտ է: Նա մահից փըրկեց Հրանոյշին:

Ան. Դժև նրան փող տուիր:

ՍԱՄՄ. Այս, յիսուն րուբլի:

ՎԱՐԴ. Յիսուն րուբլի... Յիսուն րուբլիանոց ընծայ...

ՍԱՄՄ. Ասենք, իր համար էլ բաներ պիտ' առնի:

Ան. Որդիս, Էղքան փող կը տան աղջկայ ձեռքը:

ՍԱՄՄ. Գիտես ինչ, Մայրիկ: Այն դէպքից յետոյ ես Հրանոյշին այնպէս եմ խղճում և ոկսել եմ այնպէս սիրել, որ եթէ բոլոր ունեցած փողերս էլ ուզի, կը տամ: Աստուած վըկայ, ես նրան չեմ կարող մերժել: Մանաւանդ հիմա այնպէս է, որ առաջուայ Հրանոյշին դժուար է ճանաչել...

ՎԱՐԴ. Ճիշտ որ, շատ զարմանալի է: Առաջ ինչքան տըխուր էր, չխօսկան, շարունակ մտածմունքի մէջ, կարծես աշխարհի հոգալ նրան էին տուել—իսկ հիմա ամբողջ օրը բլըլում է, կամ երգում, կամ հանաքներ է անում...

Ան. Եղպէս կը լինի: Հիմի ինքն էլ է փոշմանել իր արածից: Էն ցաւերը, որ նա քաշեց, էն վոյվոյոցը, որ գիշեր ցերեկ չէր կտրւում, նրան չէ, նրանից էլ վատթարին խելքի կը բերէին ու սիրել կը տային կհանքը...

ՎԱՐԴ. Ասենք, մայրիկ, գիտէք, հիմա դուք էլ նրա հետ շատ լաւ էք վարւում: Այդ էլ մեծ նշանակութիւն ունի: Առաջ բնչպէս էիք վարւում նրա հետ միենոյն էր...

Ան. Դու որ քեզ մէջտեղ չես խառնում...

ՎԱՐԴ. Խհարկէ: Ես սննաւ եմ ասում, չէ: Ամեն կողմից կարիճի պէս խայթում էիք—դու մի կողմից, ծիգրանը միւս կողմից...

ՍԱՄՄ. Իսկ Բո...

ՎԱՐԴ. Դու էլ պակաս չես:

ՍԱՄՄ. Իսկ դժւ... Մոռացել ես ձեր ամեն օրուայ կոիւները... Այն ի՞նչ բան էր... կատուների պէս քիչ էր մնում իշրար երես ճպոկորէիք... Եւ այն էլ ինչ յիմար, դատարկ պատ-

ճառներից... Թոյրերը այդպէս են լինում, ինչպէս դուք էիք:

ՎԱՐԴԻ. Իսկ եղբայրները այդպէս են լինում, ինչպէս դուք էք:

ԱՆ. Հաւ, լաւ, տեսնեմ, կարող էք, էլի սկսեցէք:  
(Մտնում է Տիգրանը):

### S Ե U Ի L 9.

Տիգրան, Աննա, Սամսոն, Վարդուշ.

ՎԱՐԴԻ. Տիգրան, Հրանոյշին չտեսմր:

ՏԻԳ. (Անհանգիստ) Հ'ը ի՞նչ է պատահել... Ո՞ւր է գնացել...

ԱՆ. Խեղճ տղին ինչպէս վախեցրեց... Ը'հ, առ, է, ինչի համար էնպէս վրայ պրծած հարցրիր (ծաղրիլի) «Տիգրան, Հրանոյշին չտեսմր». Հաւ, տեսաւ, ի՞նչ պիտի անես, ինչի համար հարցրիր:

ՏԻԳ. (Երկմիտ) Տէր Աստուած...

ՎԱՐԴԻ. Այստեղ ի՞նչ վախենայու բան կար որ...

ՏԻԳ. Ես ինչ իմանամ: Մի անգամ սիրտս ահ է ընկել, կարծեցի, թէ էլի մի բան է պատահել... Հրանոյշը մւր է, որ ասում էք, «չտեսմր»:

ԱՆ. Խանութ է գնացել, խանութ, բան առնելու: Ը'հ, Տիգրան: Դու էլ որ ամեն դատարկ բանի համար չես վախենում... Աղջիկ է, փող է վերցրել, գնացել բազար...

ՏԻԳ. (Սամսոնին) Դու տուիր, Սամսոն:

ՍԱՄՍՈ. Այո, յիսուն մանէթ:

ՏԻԳ. Յիսման մանէթ... Ի՞նչ էր անում նա այնքան փող: Ցետոյ, մենակ գնաց:

ՍԱՄՍՈ. Այո, բոլորովին մենակ: Ի՞նչ կայ որ...

ՏԻԳ. Մայրիկ, ես քեզ քանի անգամ ասել եմ, որ նրան մենակ չթողնէք դուքս գայ... Այսօր ատրճանակ է բոնում իր վրայ, վաղը իրան ծովը կը ձգի... Նա ամեն բանի ընդունակ է... նա խաթալու աղջիկ է:

ԱՆ. Զէ, Տիգրան, Հրանոյշը էլ էդպէս բան չի անի: Է՞նպէս է փոշմանել, որ... Մտքովն էլ չի անցկացնի... Հիմի նա ինձանից ու քեզանից էլ շատ է դողում իր կեանքի վրայ:

ՍԱՄՍՈ. Իհարկէ, նա խրատուեց, ես հիմա հանգիստ եմ այդ կողմից:

ՎԱՐԴԻ. Ես էլ շատ հանգիստ եմ:

**Տիգ.** Այնուամենայնիւ պէտք է զգոյշ լինել և աչքից չտալ... պէտք է հետեւել նրան, ինչպէս երեխայի...

**ՎԱՐԴԻ.** Երեխամյի... Ապա մի իրան էլ հարցընւ, նա հիմա ասում է. «Կս տղամարդ եմ, տղամարդ»...

**Տիգ.** Նա խորամանկն է: Այդպէս է ասում, որ իրան բարձեթող անենք... Թէ նա աղուէս է, ես նրանից աւելի աղուէս եմ... Զէ, ես անհանգիստ եմ... Պէտք է գնալ նրա ետեւից... (կամնում է դնալու)

**ՍԱՄՄ.** Դէ հերիք է, դու էլ... Ի՞նչ կասկածուն ես դառել:

**Տիգ.** Վարդիւշ, ես քեզ վրայ զարմանում եմ: Ուրիշ ժամանակ դու գլուխ կը ջարդես խանութ գնալու համար, ի՞նչու նրա հետ դուրս չեկար:

**ՎԱՐԴԻ.** Ինձ ովզ բան ասաց, Գլխարկը վերցնելն ու անհետանալը մէկ եղաւ:

**ՍԱՄՄ.** Դէ լնւ, կոիւ մի արէք: Ահա հէնց ինքը Հրանոյշը:

**ՎԱՐԴԻ.** (Վագիկով դրան մօտ) Նա է, նա է:

**ԱՆ.** (Որ նոյնպէս մօտիցիլ էր) Էս ի՞նչ է բաշ տալիս Ալեքսանը: (Մտնում է Հրանտը, յիտոյ Ալեքսանը, որը չիմողանը դնելրի դրան մօտ յատակի վրայ, նեռանում է: Բոլորն ապէած իրար երեսին են նայում եւ զարմանքից կարծես բարացիլ են: Վարկենական լուռ-թիւն:)

## ՏԵՍԻԼ 10.

Անև, Տիգրան, Սամսոն, Հրանոյշ, Վարդուշ:

**ՍԱՄՄ.** Հրանոյշ, այս ի՞նչ ճանապարհորդական պատրաստութիւններ են:

**ՀՐ.** Վաղը—ես գնում եմ:

**ՍԱՄՄ.** Այդ ուր, Աստուած յաջողի:

**ՀՐ.** Գաւառները:

**Տիգ.** Բարի ճանապարհ:

**ՎԱՐԴԻ.** Մայրիկ, ի՞նչեր է խօսում:

**ԱՆ.** Ես բան հասկանում եմ, որ քեզ ասեմ:

**ՍԱՄՄ.** Բայց ի՞նչ նպատակով, մւմ հետ:

**ՀՐ.** Դերասանական խմբի հետ, ներկայացումներ տալու:

**Տիգ.** Ա...

**ՍԱՄՄ.** Դերասանական խմբի հետ:

**ԱՆ.** Աղջիք, երմակ ես տեսել:

**ՎԱՐԴԻ.** (Մի կողմ) Խելագարութիւն է, ի՞նչ է:

**ՍԱՄՄ.** Հրանհյշ, բացատիր, խնդրեմ, ինչումն է բանը. Մենք ոչինչ չենք հասկանում քո խօսքերից: Ի՞նչպէս թէ ովազը գնում ենք... դերասանական խմբի հետ... ներկայացումներ տալու... Զլինի՝ դերասանուհի ես կամենում դառնալ:

**ՀՐ. Այն,** արդէն վճռուած է:

**ՏԻԳ. Հ'ըմ...**

**ԱՆ. Պակասը դրստուած է... էլ ի՞նչ դարդ...**

**ՎԱՐԴ. Տեսնես, յանկարծ ի՞նչ փչեց խելքին:**

**ՍԱՄՄ. Է՛հ, յետիյ: Հիմա դու կատակ չես անում:**

**ՀՐ. Ամենակին:**

**ՏԻԳ. Բայց ինչու, ասս, խնդրեմ, դու ցանկանում ես մեզանից հեռանալ: Մենք քեզ քաղցած ու ծարաւ ենք թողնում:**

**ՀՐ. Ընդհակառակը, մինչև կեանքիս վերջը ես չեմ մոռանայ ձեր երախտիքը, դուք ինձ կերակրել էք:**

**ՏԻԳ. Գուցք քեզ շորերից ենք գուրկ պահել:**

**ՀՐ. Բոլորովին: Երբ մտածում եմ, թէ որքան փողեր էք ծախսել իմ հանդերձեղնի վրայ, ես ինքս ինձնից ամաչում եմ:**

**ՏԻԳ. Ուրեմն... էլ ի՞նչ պատճառ ունիո դժգոհ լինելու մեզանից:**

**ՀՐ. Ես դժգոհ չեմ ձեզանից: Ես կամենում եմ միայն—բարոյապէս անկախ լինել ձեզանից:**

**ՏԻԳ. (հեղնաբար) Բարոյապէս... անկախ...**

**ՀՐ. Ես կամենում եմ նոյնպէս բաց անել ձեր բախտի ճանապարհը, որ փակուած է իմ ջնորհիւ:**

**ՍԱՄՄ. Դու հանելուկներն ես խօսում, Հրանհյշ: Աստուած սիրես, պարզ խօսիր:**

**ՏԻԳ. Հասկանում ես մայրիկ, թէ ում կտուրն է քար գցում:**

**ԱՆ. Ինձ բան մի հարց էք... ես գլուխ կորցրել եմ:**

**ՀՐ. Դուք ցանկանում էք ապրել ձեր ուզածի պէս, իսկ ես խանգարում եմ: Ես կը հեռանամ, դուք կ'ազատուէք մի ծանրութիւնից և այն ժամանակ կ'ապրէք ձեր ուզածի պէս:**

**ՍԱՄՄ. Գլուխս մեռնի, թէ բան հասկանամ սրանցից... Ո՞վ ասաց, որ դու ծանրութիւն ես մեզ համար... Ո՞վ ասաց, որ դու փակել ես մեր բախտի ճանապարհը... Սա ինչէր է խօսում... ինչէր է երեակայում... Դու օտար ես, ինչ է, այս տանը... դու խնդրթ ես... դու մեր հարազատ քոյրը չես...**

**ԱՆ. Այ թէ որտեղ է ասուած. օձի կծածը կը սաղանայ, լեզուի կծածը չի սաղանայ: Մեր բարկացած ժամանակ մի**

բան ենք ասել, հիմի էլ չի ուզում մոռանալ, ճար չկայ:

ՀՌ. Տէր Աստուած, ես հօ ձեզ չեմ մեղաղըում: Ինչ որ ասել էք, դուք իրաւոնք ունէիք ասելու: Ինչո՞ւ դուք պէտք է չարչարուէք, քրտինք թափէք, իսկ ես պարապ նստեմ, մատ մատի շտամ և վայելեմ ձեր աշխատանքի պտուղները... Ո՞ւր է է այստեղ արդարութիւնը... Ես հօ չեմ կարող, ճշմարիտ, մինչ վերջ, երեխայի պէս, մնալ ձեր խնամակալութեան տակ և ձրիակերի դեր կատարել: Ես չեմ կարող մինչև վերջ, ամեն մի դատարկ բանի համար, ձեռքս մեկնել ձեր առաջ և... ողորմութիւն խնդրել:

ՏԻԳ. Դա—ողորմութիւն չէ:

ՍԱՄՄ. Դա մեր եղբայրական պարտականութիւնն է:

ՀՌ. Ո՞չ, արդէն բաւական է: Ես արդէն վաղոց է չափահաս աղջիկ եմ: Իմ ինքնասիրութիւնը, իմ արժանապատւութեան զգացմունքը և, վերջապէս, իմ խիղճը բողոքում են զրադէմ: Ժամանակ է, որ ես էլ իմ պատիւը ճանաչեմ և փոքր ինչ յարգեմ իմ անձը:

ՏԻԳ. Հրանիյշ, դու, երսի, մեզ փորձել ես ուզում:

ՀՌ. Աստուած շանի: Ի՞նչի համար:

ՏԻԳ. Իսկ իթէ դա լուրջ բան է, ուրեմն դու այդ միաքը գլխիցդ կը հանես:

ՍԱՄՄ. Ես ոչ մի կերպ չեմ կարող թոյլ տալ, որ իմ քոյրը գնայ և դերասանների հետ գաւառներումը թրե՛ գայ. . Դա ամենակին պատիւ չի բերի մեր ընտանիքին:

ՏԻԳ. Ի՞նչ պատիւ... Մեզ նման եղբայրների երեսին կը թքեն... Մենք կը խայտառակունքնք բոլոր ընտանիքով... ծազը ու ծանակ կը շինեն մեր անունը... Իմ քոյրը—և թափառական դերասանուհի...

ԱՆ. Լսում ես, Հրանիյշ...

ՀՌ. Տիգրան, դու մոռացել ես, ես քեզ կը յիշեցնեմ: Զէ որ դու ինքդ ասացիր ինձ, որ դու էլ մարդ ես, ունիս քո սեփական ցանկութիւնները և կամենում ես ապրել քո ուզածի պէս: Այժմ թոյլ տուր և ինձ ապրել իմ ուզածի պէս, որովհետև ես էլ քեզ նման Աստծու ստեղծած մի արարած եմ և ունիմ իմ սեփական ցանկութիւնները...

ՏԻԳ. Բայց մի մոռանար, որ դու կին ես, իսկ ես—աղաւարդ: Զանազանութիւնը մեր մէջ, կարծեմ, շատ մեծ է:

ՀՌ. Տէր Աստուած, ախր այն ժվ է անիծել կնոջը, որ նա չունենայ իր սեփական ցանկութիւնները, իր սեփական աշխատանքը և իր կեանքը անցկացնի միայն զուարճութիւնների և դատարկութեան մէջ... Ո՞չ, հաղար անգամ ոչ... Աշխատանքը օրէնութիւն է նաև կնոջ համար:

**ՏԻԳ.** Գիտես ինչ կայ, Հրանոյշ։ Լաւ լսիր ինձ։ Երբ աղջիկը բոլորվին որը և անտէր է, հա, այն ժամանակ ոչինչ չունիմ դրա դէմ։ Նա գնում է ուրիշների համար կար է անում, լուացը է անում, քոծութիւն է անում, մինչև անգամ իր ոտք վատ ճանապարհ վրայ է դնում—ի՞նչ արած—ապրել է պէտք։ Բայց իրը ծնողները կենդանի են կամ ջուխտ եղայր։ Ները կողքին կանգնած, այն ժամանակ աղջկան էլ ի՞նչ կը վայելի գնալի իր թէ աշխատանքի ետկից... Դա ոչ թէ կանանց, այլ տղամարդկանց գործն է։ Աղջիկը երբ հասաւ, պէտք է մտածէ իր մարդու գնալու մասին, իսկ երբ մարդու գնաց՝ իր տունը պիտի կառավարի և իր երեխաներին մայրութիւնները։ Ուրիշ ոչինչ ես չեմ ընդունում։

**ՍԱՄՄ.** Իհարկէ, իհարկէ։ Կինը իր ամուսնու, տան պահանն է, օջախի պահապանը—և ուրիշ ոչինչ։

**ՀՐ.** Ես բոլոր հութեամբ դրա դէմ եմ.., Ամուսին, ամուսին.. Միրող, լաւ ամուսիններ—այս, ես այդ հասկանում եմ... Բայց վատ, կտուարար, անբարոյական ամուսիններ—ահա ինչն է զգուելի... Ես իմ մաքուր աշխատանքով ձեւք բերած մի կտոր հացը չեմ փոխի այդ տեսակ վատ ամուսնութեան բոլոր զուարճութիւնների հետ.. (Պառզա)։

**ՏԻԳ.** Ուրեմն... Թողնենք, որ գնաս.. Ուրեմն—մենք չը կմնեք քեզ համար.. Դու մեզ ոչ մի քանի տեղ չեմ գնում։

**ՀՐ.** Ի՞նչի համար ես այդ ասում.. Աւելի լաւ չէ, որ մենք սիրով և հաշտութեամբ քաժանուենք.. Եւ վերջապէս ես հօ ձեզանից ընդմիշտ չեմ հրաժարում.. Որտեղ էլ լինեմ, ուր որ էլ գնամ, ես միշտ ձեր կարօտը պիտի քաշեմ.. Միշտ նամակներով կը խօսեմ ձեզ հետ, տեղեկութիւններ կը տամ իմ մասին.. Խնդրում, աղաչում եմ, դուք էլ ինձ չմուանաք... (Զացուած, համարեա լալապին) Որքան էլ վշտացրած լինեմ ձեզ, ես... այնուամենայնիւ... ձերն եմ.., ձեր հարազատը...։

**ԱՆ.** Ա՛խ, Ասառած ջան, մը մեղերիս համար ես ինձ պատժում։

**ՍԱՄՄ.** Ա՛խ, Հրանոյշ, դու այս ինչեր ես անում..

**ՏԻԳ.** Ե՞ն, յետոյ... Իսկ ի՞նչ կը լինի դրա վերջը, դու այդ մտածել ես։

**ՀՐ.** Վերջը, Աստծով, ջառ լաւ կը լինի. Ես անուն և դիրք կը վաստակեմ..

**ՏԻԳ.** Կարելի է, Բայց գիտե՞մ, թէ ինչ գնով կը վաստակեմ անուն և դիրք.. Դիտեմ, թէ ինչ տեսակ ցեխի մէջ կա-

լող ես ընկնել դու... Հասկանմաւ ես արդեօք, թէ ուր կը տանի քեզ այն ճանապարհը, որ դու ընտրել ես...

ՀՌ. Իմ ընտրած ճանապարհը կը տանի ինձ դէմի փառք և Կրջանկութիւն:

ՏԻԴ. (բռնկիղով) Ո՞չ, այդ ճանապարհը քեզ կը տանի... դէպի խայտառակութիւնն... և անկում...

ՀՌ. (Յուզուած) Բաւակմն է... պատիւդ ճանաչիր... ես... բո ասած կանանցից չեմ... Ես գնում եմ աղնիւ և մաքուր աշխատանքի... և ոչ թէ....

ՏԻԳ. (Մաղր'լով) Ազնիւ աշխատանքի...

ՍԱՄՄ. Տիգրան, հանդարտուիրու—Քոյրս, դու էլ:

ԱՆ. Հրաննյշ, առաջ մօրդ թաղիր, յետոյ էդ բանն արա: (Լալս է):

ՀՌ. Ա՛խ, զուր էք խօսում, Արդէն վճռուած է:

ՎԱՐԴ. Հրաննյշ, մի՞թէ մայրիկին ևս խնայում... մի սպանիր նրանն...

ՏԻԳ. Եթէ դու այդ բանն անես, Հրաննյշ, ես քեզ կը համարեմ մեզ համար բոլորովին կորած: Գնա, եթէ կ'ուզես, կարող ես... համեցէք... (բաց է անում դուռը) Ահա—դուռը լայն բաց է բո առաջ... բայց լաւ իմացիր, որ այնուհետև դու այլ ևս չպիտի համարձակուիս ոտք դնել այս դրան շէմքին և մեր աչքին երևալ... Գնա, ես քեզ այլ ևս չեմ խզնում: Գնա, թէ կուզ ջուրն ընկիր!

ՀՌ. Ներողութիւն, Այդպիսի յիմարութիւն ես այլ ևս չեմ կրկնի երբէք, որովհետև ես այսուհետև կարող եմ ապրել իմ սեփական աշխատանքով! (Արագ անցնում է միւս սենեակը: Ամսնքը վշտանար արձանացիկ հն մտառանջ գորթիրի մէջ):